| 7. Արշիպել | Տարտանէլ |

(1) Միւշիրլիք։ -*Maréchalat.*
(2) Վիլայէթ։ -*Gouvernement général.*

## Անատօլեան

| ՄԱՐԶՊԱՆՈՒԹԻՒՆ | ԳԼԽԱՒՈՐԱԳԼՈՒԽ |
|---|---|
| 8. Ոլիմպեան | Պրուսա |
| 9. Այտին | Իզմիր |
| 10. Քօնիա | Քօնիա |
| 11. Գաղատիա | Էնկիւրի |
| 12. Քասթէմունի | Քասթէմունի |
| 13. Սեբաստիա | Սէվազ |
| 14. Պօնտոս | Տրապզօն |
| 15. Կարին | Էրզրում |
| 16. Տիարպէքիր | Տիարպէքիր |
| 17. Հալէպ | Հալէպ |
| 18. Ադանա | Ադանա |
| 19. Սուրիա | Շամ |
| 20. Բաբիլոն | Պաղտատ |
| 21. Լիբանան | Տարէլքամար |
| 22. Մէքքա | Մէքքա (Շէրիֆութիւն) |
| 23. Հէճազ | Ճիտտա |
| 24. Մէտինա | Մէտինա |
| 25. Եէմէն | Եէմէն |

## Ափրիկեան

| | |
|---|---|
| 26. Եգիպտոս | Գահիրէ (Փոխարքայութիւն) |
| 27. Տրիպօլի | Տրիպօլի |
| 28. Թունիս | Թունիս (Պէյութիւն) |

# ԵՒՐՈՊԵԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

## ԱՆԳԼԻԱ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Թագուհի ՎԻԿԹՕՐԻԱ Ա.

Մայրաքաղաք ԼՕՆՏՕՆ. — Բն. 3,215,000.

Թիւ բնակչաց երկրին 31,000,000։

—

## ԻՊԵՐԻԱ

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԲՈՐԹՈՒԳԱԼ

**ԲՕՐԹՈՒԿԱԼ**. ՍԱՀՄԱՆԱԴՐ. ԿԱՌԱՎԱՐ.

Թագաւոր ԼՈՒԻ Ա.

Մայրաքաղաք ԼԻԶՊՕՆ. — Բն. 250,000.

Թիւ բնակչաց երկրին 4,350,000։

—

**ՍՊԱՆԻԱ**. ՍԱՀՄԱՆԱԴՐ. ԿԱՌԱՎԱՐ.

Թագաւոր ԱՄԷՏԷ.

Մայրաքաղաք ՄԱՏՐԻՏ. — Բն. 318,000։

Թիւ բնակչաց երկրին 16,550,000։

## ՖՌԱՆՍ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Նախագահ ԹԻԷՌ.

Մայրաքաղաք ՓԱՐԻԶ. — բն. 2,000,000.

Թիւ բնակչաց երկրին 40,000,000։

—

ՊԷԼՃԻՔ. ՍԱՀՄԱՆԱԴՐ. ԿԱՌԱՎԱՐ.

Թագաւոր ԼԷՕՓՕԼՏ Բ.

Մայրաքաղաք ՊՐՈՒՔՍԷԼ. — բն. 175,000.

Թիւ բնակչաց երկրին 5,000,000։

—

## ՀՕԼԱՆՏ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Թագաւոր ԿԻՅՈՄ Գ.

Մայրաքաղաք ԱՄՍՏԷՐՏԱՄ.

— բնակիչ 271,764.

Թիւ բնակչաց երկրին. 3,628,500։

—

## ՍՔԱՆՏԻՆԱՎԻԱ

(Շվէտ — Նորվէժ)

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Թագաւոր ՇԱՌԼ ԺԵ.

Մայրաքաղաք ՍԹՕՔՀՕԼՄ. — բն. 140,000.

Թիւ բնակչաց երկրին 5,875,000։

## ՏԱՆՄԱՐՔ

ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Թագաւոր ՔՐԻՍՏԻԱՆ Թ.

Մ. քաղաք ՔՕՓԷՆՀԱԿ. — բն. 181,000։

Թիւ բնակչաց երկրին 1,755,900։

—

## ԳԵՐՄԱՆԻԱ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Կայսր ԿԻՅՈՄ.

Մայրաքաղաք ՊԷՌԼԻՆ. — բն. 702,500.

Թիւ բնակչաց երկրին 2,511,500։

—

## ՀԵԼՎԵՏԻԱ

ԺՈՂՈՎՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Մայրաքաղաք ՊԷՌՆ. — բն. 30,000.

Թիւ բնակչաց երկրին 2,511,000։

—

## ԻՏԱԼԻԱ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Թագաւոր ՎԻԿՏՕՌ ԷՄՄԱՆՈՒԷԼ Բ.

Մայրաքաղաք ՀՌՈՄ. — բն. 221,000.

Թիւ բնակչաց երկրին 26,000,000։

## ԱՒՍՏՐԻԱ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Կայսր ՖՐԱՆՍՈՒԱ ԺՕԶԷՖ Ա.
Մայրաքաղաք ՎԻԷՆՆԱ. –Բն. 826,000.
Թիւ բնակչաց երկրին 53,555,000:

—

## ՌՈՒՍԻԱ

ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Կայսր ԱԼԷՔՍԱՆԴՐ Բ.
Մայրաքաղաք ՊԵՏՐՊՈՒՐԿ.
–Բնակիչ 668,000.
Թիւ բնակչաց երկրին 78,400,000:

—

## ՀԵԼԼԱԴԱ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Թագաւոր ԺԷՈՐԺ Ա.
Մայրաքաղաք ԱԹԷՆՔ. –Բն. 41,500.
Թիւ բնակչաց երկրին 1,548,500:

# ԱՍԻԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԲԱՑԱՐՁԱԿ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Շահ ՆԱՍՐԷՏՏԻՆ.
Մայրաքաղաք ԴԷՀՐԱՆ. –Բն. 150,000.
Թիւ Բնակչաց երկրին 9,000,000:

## ՀՆԴԿԱՍՏԱՆ

Ընդ այլ եւ այլ Տէրութեամբ

Մ. քղք Անկլային տիրապետութեան ԿԱԼԿԻԻԹԱ. –Բն. 1,000,000.
Թիւ բնակչաց երկրին 150,000,000:

## ՉԻՆ

ՄԻԱՀԵԾԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

Կայսր ԹՕՆԿՉԷ.
Մայրքղք ՊԷՔԻՆԿ. –Բն. 1,650,000.
Թիւ բնակչաց երկրին 400,000,000:

## ՃԱՊՕՆ

ՄԻԱՀԵԾԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

Կայսր Հոգեւոր (Միքատօ) . . .
Մ. քաղաք ՄԻՅԱՔՕ. –Բն. 600,000.
Կայսր աշխարհին (Թայքուն) ՄԻՆԱ ՄՕԹԹՕ
Մայրաքաղաք ԵԷՏՕ. –Բն. 900,000.
Թիւ բնակչաց երկրին 12,000,000:

# ԱՄԵՐԻԿԵԱՆ
# ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

## ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

*Նախագահ* ԿՐԱՆԴ.
*Մայրքաղաք* ՎԱՇԻՆԿԹՕՆ.
*—Բնակիչ* 100,900.
*Թիւ բնակչաց երկրին* 38,422,000։

—

## ՄԷԿՍԻԿԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

*Նախագահ* ԺՈՒԱՐԷԶ.
*Մայրքաղաք* ՄԷԿՍԻԿՕ.
*—Բնակիչ* 210,000.
*Թիւ բնակչաց երկրին* 8,743,000։

—

## ՊՐԷԶԻԼ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

*Կայսր* ՊԷՏՐՕ Բ.
*Մայրքաղաք* ՌԻՕ ՏԸ ԺԱՆԷՅՌՕ.
*—Բնակիչ* 420,000.
*Թիւ բնակչաց երկրին* 10,000,000։

## ԹԻՒ ՄԱՐԴԿԱՆ ԸՆԴ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԵՍ ԵՐԿՐԻ

ԸՍՏ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԱԳՐԱՑ

| Ժողովուրդ. | | Կրօնք. | |
|---|---|---|---|
| *Եւրոպ* | 500 *միլիոն* | *Քրիստոնեայ* | 500 *միլիոն* |
| *Ասիա* | 600 *միլիոն* | *Մահմետական* | 96 *միլիոն* |
| *Ափրիկ* | 50 *միլիոն* | *Հրեայ* | 4 *միլիոն* |
| *Ամերիկ* | 60 *միլիոն* | *Կռապաշտ* | 600 *միլիոն* |
| *Ովկիանիա* | 10 *միլիոն* | | |
| *Գումար* | 1000 *միլիոն* | *Գումար* | 1000 *միլիոն* |

## ՀՈԳԵՒՈՐ
## ՀՈՎԻԱՊԵՏՈՒԹԻՒՆՔ

### ՊԻՈՍ Թ. ՊԱՊ

Հայրապետ Լատին Եկեղեցւոյ,
ընտրեալ ի 1846.
Աթոռանիստ — ՀՌՈՄ։

---

### ԱՆԹԻՄՈՍ Զ. ՊԱՏՐԻԱՐՔ

Հայրապետ Յոյն Եկեղեցւոյ,
ընտրեալ ի 1871.
Աթոռանիստ — ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ։

---

### ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հայրապետ Հայ Եկեղեցւոյ,
ընտրեալ ի 1866.
Աթոռանիստ — ԷՋՄԻԱԾԻՆ։

## ՀԱՅՔ

### ԳԷՈՐԳ Դ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ամենայն Հայոց։ Ծնեալ ի Կ. Պոլիս 1815 Յուլիս 5։ —Ընտրեալ կաթողիկոս ամենայն Հայոց ընդհանուր ժողովէն Կ. Պոլսի 17 Սեպտեմբեր 1866։

### ՏԷՐ ՄԿՐՏԻՉ Վ. ԽՐԻՄԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԱՐՕՆԱՅ

### ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍԻ

Ծնեալ ի Վան (յԱյգեստան) 5 Ապրիլ 1820։ —Ձեռնադրի յԷջմիածին Եպիսկոպոս Տարօնոյ 20 Հոկտ. 1861 —Ընտրի Պատրիարք ընդհանուր ժողովէն Կ. Պոլսի 4 Սեպտ. 1869։

---

| | |
|---|---|
| Թիւ Հայոց ի Թուրքիա | 2,400,000 |
| Ի Ռուսիա, ի Պարսկաստան, ի Հնդկաստան և այլուր | 2,000,000 |
| Գումար | 4,400,000 |

որմէ՝ 74,000 պապական, 46,000 բողոքական, իսկ մնացածը ուղղափառ։

# ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

—

Ազգ. Վարչութիւնը ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ է ըստ Սահմանադրութեան Հայոց որոյ ոգին սոյն յօդուածոց մէջ համառօտիւ կ'ամփոփի:

Ա. Երեսփոխանական վարչութիւնը հիմնեալ է իրաւանց ու պարտեաց ըսկըզբանց վրայ որք արդարութեան ըսկըզբունք են. իր ուժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ որ օրինաւորութեան սկիզբն է:

Բ. Սոյն սկզբանց զօրութեամբ՝ որք աւանդական են Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, ամէն հայեր հաւասար են իրենց իրաւանց ու պարտեաց մէջ:

Գ. Փոխադարձ պարտեօք կապուած են իրարու Ազգն ու Ազգային Վարչութիւնը: — Ազգայնոց պարտքն է՝ Վարչութեան հոգւոյ ու ծախից մասնակից ըլլալ իւրաքանչիւր ըստ կարողութեան, և անոր տնօրէնութիւնքը ազգասիրապէս յարգել: — Վարչութեան պարտքն է՝ արդար և օրինապէս վարուիլ ազգային տնօրէնութեանց մէջ և հայրաբար ընդ ազգայինս:

## Կեդրոն.

Դ. Հայ ազգը Թուրքիոյ մէջ օսմանցի Հայերու կողմէն ընտրեալ ընդհանուր ժողովով մը կը ներկայանայ, գըլուխն ունելով Պօլսի Պատրիարքը՝ նոյն իսկ ժողովէն ընտրեալ և կայսերական հրովարտակով հաստատեալ: — Սոյն ժողովին միջնորդութեամբը կը վարէ Ազգն ընդհանուր Վարչութեան վրայ իր հեղինակութիւնը:

Ե. Պօլսի պատրիարքարանը ընդհանուր Վարչութեան կեդրոնն է, և Պատրիարքը՝ իբրև ներկայացուցիչ ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ օսմանցի Հայոց պաշտօնական հոգևոր պետն է, կեդրոնական վարչութեան գործադիր իշխանութիւնը կը վարէ և պատասխանատու է Ազգին և Տէրութեան առջև:

## Գաւառ.

Զ. Գաւառները կը ներկայանան իւրաքանչիւրն իր բնակչաց կողմէն ընտրեալ գաւառական ժողովով մը, գըլուխն ունելով գաւառին առաջնորդ Արքեպիսկոպոսը՝ նոյն իսկ ժողովէն ընտրեալ, Պատրիարքարանէն վաւե-

բացեալ և Բ. Դռնէն հաստատեալ:— Այն ժողովին միջնորդութեամբ կը հսկէ իւրաքանչիւր գաւառ իր առանձին մատակարարութեան վրայ:

Է. Առաջնորդարանը գաւառագլխին մէջ գաւառական վարչութեան կեդրոնն է, և Առաջնորդը՝ փոխանորդապէս Պատրիարքին՝ գաւառական ազգային պաշտօնական հոգեւոր պետն է. Գաւառական վարչութեան գործադիր իշխանութիւնը կը վարէ և պատասխանատու է Գաւառին միանգամայն և կեդրոնական վարչութեան առջեւ:

## Թաղ.

Ը. Թաղերը կը ներկայանան իւրաքանչիւրն իր եկեղեցւոյ ժողովուրդէն ընտրեալ թաղական ժողովով մը, գլուխն ունելով եկեղեցւոյ Մեծաւորը կամ Աւագերէցը: Այն ժողովին միջնորդութեամբ կը հսկէ իւրաքանչիւր թաղ իր առանձին մատակարարութեան վրայ:

Թ. Ամէն հայ իր թաղին մէջ ընտրող է 25 տարեկան և ընտրելի 30 տարեկան:

## ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ Ի ԹՈՒՐՔԻԱ

—

### Հիւսիսային գաւառ

| ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ | ԳԱՒԱՌԱԳԼՈՒԽ |
|---|---|
| 1. Թրակիա | Էտրնէ |
| 2. Տանիւպեան | Վառնա |
| 3. Պոնտոս | Տրապզոն |
| 4. Շիրակ | Կարս |
| 5. Բիւրակն | Կարին |
| 6. Սեբաստիա | Սէվազ |
| 7. Ամասիա | Ամասիա |
| 8. Գաղատիա | Էնկիւրի |
| 9. Նիկոմիդիա | Իզմիտ |
| 10. Ոլիմպեան | Պրուսա |
| **Հարաւային գաւառ** | |
| 11. Զմիւռնիա | Իզմիր |
| 12. Կապադովկիա | Կեսարիա |
| 13. Կիլիկիա | Ադանա (Կաթողիկոսութիւն) |
| 14. Ուլնիա | Մարաշ |
| 15. Հաշտեան | Հարբերդ |
| 16. Տարօն | Մուշ |
| 17. Վասպուրական | Վան |
| 18. Միջագետ | Տիգրանակերտ |
| 19. Երուսաղէմ | Սաղիմ (Պատրիարքութիւն) |
| 20. Եգիպտոս | Քահիրէ |

# ՇՔԱՆՈՒԱՆՔ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

### ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ կամ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՎԵՀԱՇՆՈՐՀ Կաթողիկոս, — Տէր Հայրապետ կամ Աստուածընտիր Հովուապետ, Առաքելաշնորհ Սրբազնապետ, Հոգեւոր Տէր, — Վեհ Սրբազնապետութիւն (Sainteté). (1)

### բ. ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ Պատրիարք, —Սրբազան Տէր կամ Բարձրաշնորհ Սրբազան, — Բարձր Սրբազնութիւն (Eminence).

### գ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ

ՊԵՐՃԱՇՆՈՐՀ Արքեպիսկոպոս, — Սրբազան Տէր կամ Արհիաշնորհ Սրբազան, — Արհի Սրբազնութիւն (Grandeur). (1)

(1) Իբրեւ մասնաւոր կաթողիկոս՝ Սսոյ կաթողիկոսին շքանունն է հետեւեալը. Երանաշնորհ կաթողիկոս, —Սրբազնագոյն Տէր, —Երանաշնորհ Սրբազնութիւն։

### դ. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Եպիսկոպոս, — Հայր Սրբազան, —Սրբազնութիւն (Grace).

### ե. ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Վարդապետ, — Հայր Սուրբ, — Սրբութիւն. (Révérendissime).

### զ. ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ

ՀԱՅՐԱՇՆՈՐՀ Քահանայ, — Տէր Հայր կամ Տիրաշնորհ Հայր, — Հայրութիւն (Révérend).

### է. ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ

ԲԱՐԵՇՆՈՐՀ Սարկաւագ, – Տիրացու եղբայր, — Եղբայրութիւն (Frère).

(1) Թէ նախկին Պատրիարքաց եւ թէ գաւառական ընդհանուր Առաջնորդաց է պաշտօնի, տանելով ընդ իրաւասութեամբն եպիսկոպոսաց առաջնորդաց կամ փոխառաջնորդութեանս։

# ՇՔԱՆՈՒԱՆՔ

## ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

ա. ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ

ՎԵՀԱՓԱՌ Արքայ եւ Կայսր, — Վեհափառ եւ Օգոստափառ Տէր, — Վեհափառութիւն (*Majesté*).

բ. ԻՇԽԱՆԱԿԱՆ եւ ՊԱՅԱԶԱՏԱԿԱՆ

ՎԵՀԱԶՈՒՆ իշխան, Վեհազուն Տէր, — Վեհազնութիւն (*Altesse royale*).

գ. ԵՊԱՐՔՈՍԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱՊԱՏԻՒ Եպարքոս, Փոխարքայ, — Բարձրապատիւ Տէր, — Բարձրութիւն (*Altesse*).

դ. ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ

ՎՍԵՄԱՊԱՏԻՒ Նախարար, Մուշիր, Դեսպան, Մարզպան, — Վսեմապատիւ Տէր, — Վսեմութիւն (*Excellence*)

ե. ԱՒԱԳԱԿԱՆ [1]

ՄԵԾԱՊԱՏԻՒ Բաշա, Պէյ, Էֆէնտի եւ Պարոն, — Մեծապատուութիւն (*Très honorable*).

---

(1) Արքունի եւ Ազգային ժողովոյ պաշտօնէից, ծերակուտականաց եւ խորհրդականաց:

# ՇՔԱՆՈՒԱՆՔ

## ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻՆ

ա. ԴՇԽՈՅԱԿԱՆ

ՎԵՀԱՓԱՌ Թագուհի եւ Կայսրուհի, — Ծիրանափառ Դշխոյ եւ Վեհափայլ Տիկին, — Շնորհապանծ Վեհափառութիւն (*Gracieuse Majesté*).

բ. ՊԱՅԱԶԱՏԱԿԱՆ

ՎԵՀԱԶՈՒՆ Իշխանուհի, — Վեհազուն Տիկին եւ Տիրուհի, — Շնորհաշուք Վեհազնութիւն. (*Altesse Royale ou Impériale*).

գ. ԵՊԱՐՔՈՍԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱՇՈՒՔ Եպարքուհի, — Բարձրաշուք Տիկին, — Շնորհաշուք Բարձրութիւն (*Gracieuse Altesse*).

դ. ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ

ՎՍԵՄԱՇՈՒՔ Նախարարուհի, Դեսպանուհի, Մարզպանուհի, — Վսեմափայլ Տիկին, — Շնորհափայլ Վսեմութիւն (*Gracieuse Excellence*).

ե. ԱՒԱԳԱԿԱՆ

ԱԶՆՈՒԱՇՈՒՔ Տիկին, — Շնորհափայլ Ազնուութիւն. (Օրիորդաց) Ազնուափայլ Տիրուհի եւ Նազելի Օրիորդ, — Շնորհափայլ Նազելութիւն:

# ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ
# ՏԱՐԵԲԱՇԽԱԿԱՆ

—

Տարածութեան չափին պէս՝ ժամանակին չափն ալ ունի իր կարեւորութիւնը: Ժամանակ և տարածութիւն՝ անվախճանին գաղափարը տուող այս երկու համագոյակից բնական էութիւնքը՝ յորս յաւիտեան ընկղմեալ են համայն տիեզերք և ամենայն գործք մարդկան, պատմութեան երկու աչքերն են ճշմարտապէս. մէկը ժամանակագրութեամբ կը լուսաւորէ զանի և միւսը տեղագրութեամբ: Ուստի ժամանակի և տարածութեան չափոց ճշգութեան հարկաւորութիւնն անժխտելի է յաչս իմաստասիրին և օգուտն անկշռելի մարդկային գործողութեանց մէջ ամէն ատեն և ամէն ուրեք: Ժամանակի և տարածութեան անպարագրելի անհունից մէջ՝ մարդուս չափելիքը առանց պարագրելի կամ իր առել շօշափելի մէկ մասը մէկ կեան է. ժամանակին մէջ՝ տարի, տարածութեան մէջ՝ տեղ:

Այս չափոց բարեկարգութիւնը՝ տիեզերական ըլլալու համար՝ չափելելու առարկայից պէս՝ պէտք է որ բընական ըլլայ: Տարածութեան չափին ճշտութեան խնդիրը լուծեալ է բնական կերպով Ֆրանսացւոց հնարած Մէդր անուանեալ չափով, որ երկրագընտիս միջօրէական շրջանակին մէկ քառորդին տաս միլիոներորդ մասն է՝ իբրեւ միութիւն տարածութեան չափին, որոյ տասնորդական դրութեամբ բաժանմունքը ամէն փափաք կըյագեցնեն այս մասին: Իսկ ժամանակին չափոց բարեկարգութիւնը՝ որ թէպէտ Գրիգորեան տոմարով իր ճըշտութիւնը գտած է աստեղական հաշւոց մէջ՝ ամէն 4 տարին և ամէն 4 դարագլուխ մէյմը նահանջելով տարին, սակայն իր բաժանմանց մէջ թերութիւններ թողած է բանաւորութեան դէմ որոնք պէտք ունին ուղղուելու ըստ աստեղական դրութեան:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏՈՄԱՐ. — Այս տոմարը Յուլեան տոմարին սրբագրութիւնն է որ եղաւ 1582ին Գրիգոր ԺԳ. Պապին ձեռօք, զոր այսօր արեւմտեայք կը գործածեն: Իր ճշտութեամբն հանդերձ երկու մեծ թերութիւններ ունի. մէկը՝ յունվարէն սկսած տարեգլուխն է որ ծուռ է և որով ամէն ամսագլուխք խախտեալ են իրենց բնական տեղէն՝

աստեղական դրութեանց մէջ. երկրորդը՝ ամսոց անուններն են որք խառն ի խուռն, շփոթ և ամենևին անտեղի ու անյարմար են բանաւէր ու դիտօղ ազգի մը համար։

1. Տարեգլուխ. — Աստեղական կամ արեգակնային դրութեան մէջ՝ որ միակ ընդունելին է ժամանակին չափոց մէջ, բնականապէս 4 գլխաւոր կէտ կայ, որոցմէ մէկէն կամ միւսէն կրնայ սկսիլ տարին, որք են 4 եղանակաց սկիզբը, որոնք աստեղակամարին վրայ նշանակեալ իբր հաստատ կէտեր՝ ընդունված են աստղաբաշխօրէն։

Տարակոյս չը կայ թէ այս կէտերէն գարնային հաւասարակածի կէտն է որ բնական տարեգլուխ կրնայ ըլլալ. ով որ աչք ունի ու զգացում և կը դիտէ ըզ բնութիւն, կը տեսնէ թէ գարունն է տարւոյն առաւօտը, կը տեսնէ թէ ծերացեալ տարին գարնան եղանակէն կ'ըսկսի վերստին մանկանալ, բնութիւնը նորէն կ'արթըննայ ու կենդանացնէ ամէն արարած, ժամանակաց և եղանակաց սկիզբը կը դառնայ և վերջապէս նորէն կ'ըսկսէ տարին զիւր շրջանը։

Գարնամուտէն սկսած այս բնական տարւոյն ամսագլուխներն բատ

կարի ճիշտ կը պատասխանեն աստեղակամարի կենդանակերպից՝ որոց մէջէն անցնելով կը կատարէ արեւն իր տարեկան շրջանը, և որոց վրայ չափված է տարւոյն բաժանումն ի 12 ամիս և ի 4 եղանակ։

Բնութեան ամանորեայ երեւոյթները նկատողութեան չառնելով միւս ո՛ր եղանակաց ալ սկիզբէն սկսի տարին, ամսագլուխները դարձեալ կը պատասխանեն կենդանակերպ աստեղատանց։

Հին ազգերը՝ աւելի դիտօղ բնութեան և աւելի բանաւոր քան զարդիս, միշտ գարնամուտէն կ'ըսկըսէին նոր տարին։ Իսկ ետքերը երեւելի դէպեր պատահեցան այլ և այլ ազգաց մէջ որոց յիշատակը պահելու համար նոյն դէպքերէն սկսեալ թվական դնել ուզեցաւ, և ասանկով երեւան եկան շատ մը քաղաքական թվականներ ու տարեգլուխներ զորոնք երկար կ'ըլլայ հոս մի առ մի թըւել ու բացատրել։ Հանինք երեւելագոյնին։

ՔՐԻՍՏՈՍԻ ԹՎԱԿԱՆ. — Դարերու պատմութեան մէջ մարդկային միտքը յափշտակօղ ամենամեծ եղելութիւնը Յիսուսի Քրիստոսի հրաշալի գալուստն

ըլլալով. տարակոյս չը կար որ քրիստոնէ ժողովրդոց համար քան զայն երևելի եղելութիւն և քան զայն հաստատ թուական չէր կրնար ըլլալ. ուստի արդէն քրիստոնեայ և հետզհետէ քրիստոնէութիւնն ընդունող ժողովուրդք ընդունեցին զայս թուականը, լքնելով ուրիշ թուականաց գործածութիւնը: Բայց ցաւալին ան էր որ տարին մի և նոյն օրը չէր սկսեր ո՛չ միայն այլ և այլ երկիրներու մէջ, այլ և մի և նոյն երկրի մէջ զանազան տարեգլուխներ կային: 1565 ին Կարոլոս Թ. հրովարտակով մը վերցուց Ֆրանսայէն միւս բոլոր տարեգլուխները և հրամեց որ Յունվարէն սկըսած տարեգլուխն ընդունվի և այն գործածվի ընդհանրապէս. ասանկ ընդհանրացաւ և մնաց մինչև այսօր այս սովորութիւնը:

Առաջին ակնարկով միտում մը կայ կարծելու թէ Քրիստոսի թուականին զուգընթաց բերելու համար է որ յունվարը տարեգլուխ ընդունված է, բայց ամենևին չ'է այնպէս. թէ որ անանկ ըլլար՝ Քրիստոսի ծնունդէն կ'ըսկսէր տարին ինչպէս Շարլըմայնին օրով էր. այլ է՛ յունվար տարեգլուխը ուրիշ հնագոյն և դիցաբանական թուականի մը տարեգլուխ, որոյ բացատրութիւնն անօգուտ չ'է հոս ի լուսաբանութիւն խնդրոյն:

Յունվար կամ յանվար բառը Լատինաց Յանոս կռապաշտ թագաւորին անունէն եկած է, որում տաճար կանգնեց Հռոմուլոս Հռոմ քաղքին մէջ՝ հաստատած ըլլալով զանի յանուն խաղաղութեան հաստատածի, որոյ իշխանութիւնը ժամանակի և ամաց վերայ ալ տարածեալ ըլլալուն համար, երկու գլխով ծոծրակ ծոծրակի տուած կը նկարագրէին զանի, որոյ մէկ դէմն անցեալին կը նայէր, միւսն ապագային: Յանուն կամ ի յիշատակ Յանոսի՝ տարեգլուխը յունվարէն ըսկըսելու սովորութիւնն ահա այսպէս սկսաւ ու մինչև այսօր մնաց, որոյ յարգն ու կարևորութիւնը Յանոսի երկրպագուք միայն կարող են կշռել:

Ուստի յունվար տարեգլուխը ծուռ է աստղաբաշխօրէն, վասն զի ձմռան 12րդ օրը կ'ըսկսի փոխանակ սկիզբէն սկսելու, և յունվար բառն անբանական ու անտեղի, ուստի և բառ մեզ անընդունելի: Թող Լատինք պաշտեն կամ՝ չը պաշտեն իրենց հաստատածը, անմոռաց պահեն թող անոր յիշատակը. իրենց գիտնալու բանն է. Յոյնք

հեռուի՛ն Թող Լատինաց. սա ալ Յունաց գիտնալու բանն է. իսկ Հայոց ի՞նչ. ի՛նչ հարկ կայ Հայոց՝ Լատինաց կամ Յունաց քրջերը բռնել ու անոնց հետեւիլ. չ'ունի՞ն արդեօք իրենց տարեգլուխը: Բայց ահէ՝ Յունվար տարեգլուխը թէ՛ Յունացն ըլլայ և թէ Լատինաց, ուրիշ մեծ տարբերութիւն մ'ալ ունի, այն է ամսագլխոց խախտումը:

2. Ամսագլուխ. — Ամիս բառով տարեգրութեան մը մէջ արեւին անցուցած միջոցը տ'իմանանք, և 12 տարեգրութեանց միջոցները 12 ամիս տի կոչենք: Արդ՝ յունուարի մէկը ի՞նչ նշանակութիւն ունի տարեգրութեան մը կամ քիչ շատ խորհող անձի մը համար, թէ՛ իբրեւ տարեգլուխ Քրիստոսի Թլփատութեան և թէ՛ իբրեւ ամսագլուխ: Իբրեւ տարեգլուխ՝ տի յիշէ Քրիստոսի ծնունդը որ չ'է իսկ կատարված նոյն օրը, այլ ըստ ոմանց առաջ և ըստ ոմանց ետքը կատարված է, միանգամայն տի յիշէ Յունաց չաստուածը զոր անունը կը կրէ այս ամիսը: Իբրեւ ամսագլուխ՝ արեւն իր շրջանին մէջ տարեգրութեան մը մէջ մտնելու առաջին օրը տի նշանակէր, մինչդեռ ըստ Լատինաց

20 օր կայ որ մնացած է և ըստ Յունաց 8 օր: Այնպէս խախտած են միւս ամէն ամսագլուխներն ալ իրենց տարեգրութենէն և շփոթութեան մէջ ընկած: Ուստի ամսագլուխ ալ չ'է յունվարի մէկը և ո՛չ ալ տարեգլուխ, վասն զի եղանակի մը սկիզբը չ'է. և ի՞նչ խառնակութիւն բառից և իմաստից, և ի՞նչ այպանելի շփոթութիւն յիշատակաց և խորհութեանց:

Քրիստոսի Թլփատմանը տարեգլխան դրութեամբ քաղաքական տարւոյն հետ համաձայնելու համար, պէտք էր դնել դեկտեմբերի 9/21 ին դնել որ եղանակի մը սկիզբն է և ձմեռն արեւադարձը յորում արեգակը կը մտնէ յԱյծեղջիւր կենդանակերպը, և ասոնք ամսագլուխները գրեթէ ճիշդ կը պատասխանէին կենդանակերպ տարեգրութեանց:

3. Անուանք ամսոց. — Յունվարին ինչ նշանակութիւն ունենալն ըսինք: Փետրուար (ֆեվրիե) տենդի ամիս ըսել է. ատանկ կոչած են Հռոմայեցիք՝ այս ամսոյն մէջ իրենց մայրքաղաքին շրջակայից մէջ յաճախ տենդ պատահելուն համար: Եթէ ախտերու ալ ամիս նուիրելու հարկ կար, ինչո՞ւ նիլախտին (peste) ու հնդախտին ալ

(ֆօլէրա) մէյմէկ ամիս չըյաւելցուի։ Մարտը՝ Մարս, ուսկի՛ն Արէս՝ պատերազմի չաստուածին անունէն։ Ապրիլը՝ Աֆրօդիտէ յոյն բառէն ի յիշատակ հեշտութեան չաստուածուհւոյն Մայիսը՝ Մայա դիցուհւոյն անունէն, որ էր Արամազդայ հոմանոյշը. Յունիսը՝ Յունոն յատուկ անունէն. Օգոստոսը՝ ի յիշատակ Օգոստոս կայսեր (1) Սեպտեմբեր՝ լատիներէն եօթներորդ ամիս ըսել է, (վասն զի հիներն սկզբանէ անտի Մարտէն կ'սկսէին տարին ուսկի՛ն գարնան սկիզբէն) բայց հիմա Հռոմայեցւոց տարւոյն իններորդ ամիսը կ'ըլլայ։ Հոկտեմբեր՝ ութերորդ ամիս ըսել է, որ հիմա տասներորդ է։ Նոյեմբեր և Դեկտեմբեր՝ իններորդ և տասներորդ ըսել են, որ հիմա մետասաներորդ և երկոտասաներորդ են։ Ասոր նաև անժխտելի ապացոյց է որ Հռոմայեցիք ալ ի սկզբան Թուական անուններ կու տային ամսոց, ինչպէս հիները նախնական դարերու մէջ ըստ Աստ-

---

(1) Օգոստոսեայ յաջորդք՝ Տիբեր, Քլօդ, Ներոն, Դոմետիան ի զուր փորձեցին իրենց ժամանակէն վերաբերեալ անուանն ալ անցնել տարեցոյցին մէջ։ Մնացած չորս ամիսները պահեցին իրենց Թուական հին անուանները։

ուածաշնչին որ կ'ըսէ. «Եւ յառաջնում աւուր ամսեանն առաջնոյ եբաց Նոյ զերդիկ տապանին (1)»։ Երանի՜ թէ այս սովորութը շարունակած ըլլար և ամսոց այս թուական անուանքը պահուած ըլլային։

Բոլոր այս թերութեանց մէջէն ելլելու և տօմարին կատարեալ ճշդութիւն ու պարզութիւն տալու համար, փափաքելի էր սա հետեւեալ բնական կերպով սկսել ու յառաջ վարել տարւոյն ընթացքը։

ԲՆԱԿԱՆ ՏԱՐԻ ԵՒ ԱՄՍԱՄՈՒՏՔ. — Գարնային հաւասարակածի կէտը՝ որ է արեւուն աջահակ վերելքին զրօն, պէտք էր տարւոյն առաջին օրը սեպել և անկէ համրել տարին, որ արդէն քրիստոնէութեան հաստատման ժամանակին հետ առընչակից է զատկական լուսնին պատճառով, որոյ լոյսը Գարնամուտէն ետքը կը պատահի. զի Քրիստոնէութեան և Եկեղեցւոյ հաստատութիւնը՝ քարոզութեամբ Աւետարանին ի ձեռն առաքելոց՝ Քր-

---

(1) Առաջին ամիս ըստ Աստուածաշնչին Նիսանն է Հրէից որոյ առաջին օրը կը պատասխանէ մեր Հայկազանց Արեգ ամսոյն և մեր Բնական Զարմէն ամսոյ առաջին աւուր։

րիստոսի Ցարութեան օրէն սկսեալ համարելի է քան թէ անոր Ծննդեան օրէն. ասով՝ Շնորհական Թուականին ալ տարեմուտը կրնայ սեպլել բնական տարեմուտը, իրարու քով կարի մերձեցեալ ու համաձայնեալ գտնելով, բնութեան ու շնորհաց այս երկու ուրախառիթ յիշատակները՝ Գարուն ու Զատիկ յիրար զուգեալ, և միանգամայն համաձայն ըստ ամենայնի Աստուածաշունչ պատուիրանին որ կ'ըսէ. «Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի յամիսս տարւոյ (1):»

Եթէ ասոր արդելք նկատուեցաւ ժամանակագրութեանց մէջ ծագելիք չփոթութիւնք որ Քրիստոսի այժմեան քաղաքական Թուականէն 32 տարի վար երթալու պարտաւորելով տի պատահէր. (զի փոխանակ 1872 ի տ' ունենայինք այս տարի 1840 իբրեւ շնորհական ճիշտ Թուական) գուցէ կարելի էր ուրիշ տեսութեամբ մը. զոր օրինակ՝ Թուականը փոխանակ Քրիստոսի Ծնունդէն առնելու՝ անոր Մարդեղութեան խորհուրդէն առնըվէր, որոյ անօրէնութիւնք Տիրամայր կուսին յղացմամբը կ'ըսկսի, այսինքն Աւետման տօնէն որ ամէն ազգաց մէջ գարնան առաջին ամսոյն մէջ կը պատահի և ըստ Լատինաց գարնանամուտին խիստ մօտ օր մը, գարնան 5րդ օրը: Այս տեսութեամբ միայն հաւանելի կը թուի որ շնորհական և բնական տարեմուտք կրնային զիրարու միանալ: Հոս տարբերութիւնք ինն ամիս միայն կ'ըլլար այժմեան Թուականէն և 1873 ը գարնանամուտէն կ'ըսկսէինք փոխանակ 9 ամիս ետքը ձմեռամուտէն սկսելու. Թէպէտ պզտիկ առջինին նկատմամբ՝ բայց ըստ որում տարբերութիւն բազմամեայ՝ գուցէ անընդունելի թուէր շատերուն:

Եթէ ասոնց ո՛չ մէկը և ոչ միւսը կրցաւ ըլլալ դժբախտաբար, գոնէ ձմեռային արեւադարձի կէտը պէտք էր բռնել իբրեւ սահմանական տարեմուտ

---

(1) Այս արտայայտութիւնն այն ամսոյն է որոյ մէջ կը լրանայ զատկական լուսինը. որովհետեւ գարնանամուտէն անմիջապէս ետքը լրացող լուսինն է զատկական լուսինը. ասոր գարնան առաջին ամիսն է առաջնորդութեան յետոյ ամիսը որ տարեգլուխ էր Եբրայեցւոց: Ինչպէս որ կը դրէին այս Եբրայեցւոց տարեգլուխը ԺԲ. և ԺԳ. դարերու մէջ յարմար դարէն Զատկէն կ'ըսկսէր և Շնորհական Թուականը Քրիստոսի Յարութենէն:

քաղաքական թուականին որ Քրիս-
տոսի ծննդեան աւուրց ամենամօտ աստեղական կէտն է. առաւ ալ դարձեալ քաղաքական տարին աստեղական տարւոյն հետ համաձայնեալ կը գտնէր, և տարւոյն եղանակներն ըստ կարի ճիշտ կը պատասխանէին աստղաբաշխական եղանակաց. Գարունն ու Աշունը երկու հաւասարական զօներէն կ'ըսկսէին, Ամառն ու Ձմեռը երկու արեւադարձի կէտերէն. և ամսագլուխները չէին խախտեր իրենց աստեղական կէտերէն:

Ամիսներուն փոխանակ կռապաշտական ու բնապետական անտեղի և անմիտ, և մասնաւոր անձի, ազգի ու երկրի վերաբերեալ անուններ տալու՝ որոնք դիւրաւ կ'անհետանան, պարզութեան ու ճշտութեան համար՝ իրենց թուական անունները պէտք էր տալ, որք ի բնէ ճշմարիտ և անայլայլ՝ աշխարհիս ամէն կողմի միօրինակ կը յարմարին, զորօրինակ Նախամիս, Երկամիս, Եայլն, և զոր ամէն ազգ կրնայ իր լեզուովը թարգմանել. զորօրինակ արաբերէն՝ շէհրը էվվէլ, շէհրը սանի, շէհրը սալիս, շէհրը րաբի, շէհրը խամիս, շէհրը սադիս, շէհրը սաբի, շէհրը սամին, շէհրը թասի, շէհրը աշըր, շէհրը հադի աշըր, շէհրը սանի աշըր (1), եթէ երբէք Եւրոպացիք կամ Օսմանցիք արեգակնային ամիս գործածելու հարկ տեսնեն քաղաքական գործողութեանց մէջ: Նոյնպէս և Յոյները կրնայ շարունակել իր Նօէմբր, Դէկամբր բառերը՝ Էնդէկամբր, Դոդէկամբր աւելցնելով, և միւսները նոյն գրութեամբ փոփոխելով լրացնել իր 12 ամսոց թուական անունները:

Նախամսոյ մէկը ճիշտ Գարնանա-

---

(1) Արեգակնային այս ամսոց հետ գործածելու համար չ'ունին Օսմանցիք [illegible] թուական [illegible] Օսմանեան Տէրութեան [illegible] որ Քրիստոսի թուին 1500ին տեղի ունեցաւ, և աստղագիտական տարեմուտ կան իրենց Նեվրուզը (նոր օր) որ արդէն իսկ իբր արեգակնային տարեգլուխ ընդունուած է [illegible] հաշուեգրութեանց մէջ և որ ճիշտ գարնանամուտին այսինքն Մարտի 9 ին կը պատահի: Սակայն մեր թուին 1872 Նախամսի մէկը կը պատասխանէ Օսմանեան թուին ճիշտ 575 Շեհրը Էվվէլի մէկին: — Փափագելի է որ Օսմանցիք ընդհանրապէս ընդունէին արեգակնային այս թուական տարեմուտն ու ամիսները և ամսոց թուական անունները. այսպէս բոլոր և աստեղական տարեթուականութեան մը օրինակը պիտի կ'ըլլային [illegible] ազգաց:

ուէն սկսելով, այսինքն Լատինաց մարտի 21էն, տարւոյն բոլոր ամիսներն ալ դրեթէ ճիշտ կը պատասխանեն կենդանակերպից, այսինքն կենդանակամարի համաստեղութեանց կամ՝ աստեղատանց, որոց մէջէն անցնելով կը կատարէ արեւն իր տարեկան շրջանը:

Արեգակնային տարին բաղկացեալ ըլլալով 365 օրէ, 5 ժամէ, 48 րոպէէ և 51 մանրերկրորդէ, նահանջը 4 տարին մէյմը և 4 դարագլուխ մէյմը պէտք է որ ըլլայ ըստ Գրիգորեան տոմարին որպէս զի արեւային շրջանին կատարակները ո՛չ աւելնան ո՛չ պակսին: Ասի առանց չըլլալուն համար է որ Յուլեան տոմարին տարին 12 օր ետ մնացած է աստղաբաշխական ճիշտ տարիէն, ամէն 4 տարի և ամէն դարագլուխ անխտրաբար նահանջ ընելով: Եթէ այս մեծ վրիպակին առջեւը չ'առնուի, այս 12 օրվան տարբերութիւնք երթալով կ'աւելնայ ու դարեր անցնելով ամիս տարի կը կազմէ նոյն տոմարին մէջ:

Բայց Հայոց ի՞նչ փոյթ այս անտեղութենէն. Յուլեան տոմարը Հայոց տոմար չ'է, այսօր այս տոմարը գործածողք Ռուսերն ու Յոյներն են. թո՛ղ անոնք մտածեն: Հայերն ունին իրենց ազգային տոմարը, մենք նայինք թէ ի՛նչ բարեկարգութեան պէտք ունի այս տոմարը:

Հայոց տոմար. — Այսօր Հայոց թըւական բռնածը որոյ ՌՅԽԲ տարւոյն մէջ ենք, չէ այն Հայկազանց թուականը զոր ունէին մեր Նախահարք Հայկէն կամ՝ Քրիստոսէն անտի. այլ զայս թուականը Մովսէս Բ. Կաթողիկոս հաստատեց Քրիստոսի թվին 552ին ի յիշատակ փոփոխութեանց զորս բրաւ Հայոց գործածած հին տոմարին վրայ, և Հայք այնու հետեւ այն Մովսիսեան տոմարով վարվիլ սկսան որ անխտրաբար Հայոց թուական բռնեցաւ փոխանակ Մովսէսեան բռնելու: Բայց անշուշտ է որ Կաթողիկոսին բրած փոփոխութիւնքը չէին արժեր դարագլուխ մը կազմելու որ Քրիստոսի թուականէն նախամեծար համարուէր: Ուստի կամ՝ Հայկազանց հին թուականը լքնելու չէր, կամ՝ Քրիստոսի թուականով վարուելու էր՝ Հայկազանց տոմարին ամսագլուխներն ասոր յարմարցնելով, և տարին Քաղոցի մէկէն սկսելով որ ձմեռան արեւադարձի և բնական ամսագլխի մը կը պատասխանէ որ է դեկտ. 9:

Հայկազանց ամիսներն ալ ունէին իրենց թերութիւնները, որով զուրկ կը մնան տիեզրական ըլլալու յարմարութենէն, զի բնութեան երեւոյթներուն ամէնքը չեն պատասխաներ։ Նախ՝ ամիսներու անուանց նշանակութիւնը բառ մեծի մասին մեզի անծանօթ է. սա թերեւս տկար փաստ, բայց ծանօթ եղածներն ալ ամէնքն իրենց բնական տեղը չեն, զորօրինակ Քաղոցը որ Հնձար կամ Կլթօն բնական ամիսը տի նշանակէ, անտեղի է ձըմռան մէջ ուր ոչ արտահունձ կայ ոչ այգեկութ. մէկ քանին միայն իրենց բնական տեղը կը թըւին, ինչպէս Մարգացն ու Հրոտից, իսկ մնացածը Արեգ ու Նաւասարդէն զատ՝ յատուկ անուններ կը թըւին։

Ասէ՛ աստեղական անուներ խիստ վայելուչ կը յարմարէր տարւոյն առաջին ամսոյն, եթէ միւս ամիսներն ալ աստեղացմէ առնուին անուններն, կամ թէ՝ արեգակը այն ամսոյն մէջ միայն երեւէր երկրիս։

Երկրորդ անյարմարութիւնը՝ ամիսներու հաւասարապէս եռասնական օր բաժնված ըլլալն է, որ 5. 6 օր Աւելեաց կը թողու տարւոյն վերջը։ Այս աւելեացը իբր տասներեքերորդ

ամիս մը ձեւանալէն զատ՝ աստղաբաշխական այն անտեղութիւնն ալ ունի որ ամսագլուխները աստեղատանց կետերէն զգալի կերպով կը խախտէ. մինչդեռ այս անտեղութիւնը կրնար վերնալ եթէ այն լրական օրերը միւս ամսոց վրայ համեմատական կարգով մը բաշխուած ըլլային։

Հայկազանց թուականին այսօր մեզի համար մէկ ուրիշ անտեղութիւնն ալ՝ տարին Նաւասարդէն սկսիլն է որ Մարտի 5 և Օգոստոսի 11ին կու գայ, որ ո՛չ բնական տարեմուտ է և ո՛չ աստեղական ամսագլուխ։ Բայց մեզի համար խիստ հաւանելի է որ նախնական դարերու մէջ մեր Հայկազուն նախահարք՝ ինչպէս հին ժամանակաց ազգերը, Հրեայք, Պարսիկք, և յետոյ Հռոմայեցիք, իրենց սրբազան տարին գարնանմուտէն կ'սկսէին, որ այսօր Արեգի մէկն է, ի յիշատակ արարչագործութեան և փրկութեան մարդկան ի ջրհեղեղէն ի ձեռն Նոյեան տապանին որ հանգեաւ Մասեաց լերին վրայ ուրկէ իջան տարածեցան մարդիկ ի դաշտն Արարատայ։ Եթէ ուրիշ պատճառ մը չը կայ պատմութեամբ ցուցված, նահանջ չըներու սովորութիւնն է որ կ'երեւի թէ տա-

րած ձգած է ընդ Նաւասարդն Օգոստո-
սի մէջ: Նաւասարդի թէ անունը և
թէ հանդէսները կը վկայեն թէ արար-
չագործութեան և ջրհեղեղի յիշատա-
կը կը տօնէին նախնիք ի Հայաստան:
Զանդիկ բառ է նաւ — (նէվ կամ նէօվ)
որ նոր ըսել է և սարդ ամ՝, զոր մեր
նախնիք հայ ձայնով ամանոր թարգմա-
նած են: Ամանորի հանդէսներու մէջ
աղաւնի կը թռցնէին ի յիշատակ Նո-
յայ թռուցած աղաւնոյն, և ջրա-
խաղութիւններ կ'ընէյին, ջուր կը
սրսկէին իրարու վրայ: Այս ազգային
հին սովորութիւնը՝ որ Անահտայ տա-
ճարին մէջ կը կատարուէր ի Բագրե-
ւանդ և զոր Գրիգոր Լուսաւորիչ փո-
խադրեց յԵկեղեցի յանուն Յովհան-
նու Մկրտչի, կայ դեռ մինչև ցայսօր
հայ եկեղեցեաց մէջ ի տօնի Վարդա-
վառի կամ Այլակերպութեան Քրիս-
տոսի: Ցանկալի է որ անմոռաց պահ-
վի այս ազգային յիշատակը, այլ և
ցանկալի է որ իր բնական տեղը դառ-
նայ գայ և ամանորի ընտանեկան ու-
րախութիւնքը Հայկազանց նախնի և
բնական տարեմուտին օրը կատար-
վին, որ է գարնան սկիզբը, որպէս զի
հասարակութիւնը խելամուտ ըլլայ
անոր ծագմանն ու նշանակութեանը:

Այս յիշատակով է որ սիրելի է մե-
զի Հայկազանց թուականը որ իր թե-
րութիւններովն հանդերձ իր յարգն
ու արժանիքն ունի. նախ՝ իր հնու-
թեամբը, որ այսօր մեր գիտցածը 4575
տարի կը համրէ որ ըստ ոմանց և յայժ
հաւանօրէն ջրհեղեղի թուականն է,
մանաւանդ այնպիսի հնութեամբ որ
փոխանակ գիցաբանական եղելու-
թեան մը վրայ հիմնեալ ըլլալու՝ բը-
նական դէպի մը կամ աստղաբաշխա-
կան կէտի մը վրայ հիմնեալ է. այն է՝
իր բնական տարեմուտը որ ջրհեղե-
ղէն սկսեալ զարարչագործութիւնը
կը յիշատակէ. երկրորդ՝ այն գեղեցիկ
գաղափարովն որ ունեցեր են մեր Հայ-
կազուն նախահարքը ամիսներու ա-
նունները բնութեան երևութից յար-
մարցնելու:

Մի՛ պարծի թող Ֆռանսա այս գա-
ղափարին համար իր աստղագէտնե-
րովը որք դեռ երէկ՝ այսինքն 70 տար-
ւոյ չափ առաջ ամսոց բնական կամ
մշակական անուններ տալ մտածեցին.
մանաւանդ հիանա՛յ թող՝ զի անդ-
րանկագոյն ազգ մը կայ հին որոյ ծե-
րութիւնն ալևորեալ է թշուառու-
թեան մէջ, այլ որ այս մասին կան-
խած է զանի 44 դարով և յղացած

ու ծնած է զայդ գաղափարը որ նոր կը թուի այսօր ուշացն Եւրոպայ: Այն Փռանսացի դիտուն կաճառէն արեւելագիտաց ամենը անծանօթ չ'էին գուցէ Հայկազանց թուականն ու ամիսները, և հաւանօրէն անոնցմէ առած են այդ գաղափարը: Իսկ եթէ յինքենէ ալ խորհած ըլլան, պէտք է գիտնան թէ իրենցմէ խիստ շատ առաջ խորհօղներ եղած են: Անձիւր հայրենասէր ու ուսումնականի պարտաւորութիւնն է նախանձախնդիր հանդիսանալ այս հայրենի գաղափարին և չի լքնել զանի երբէք ծածուկ, այլ մանաւանդ բարեկարգել բարգաւաճել զանի և տիեզերական ըլլալու արժանաւոր կատարելութիւններ տալ անոր:

Շատուց ի վեր և մանաւանդ այս վերջի օրերս փափաք մը կայ ազգին մէջ Յուլեան տոմարը Գրիգորեանին հետ միացնելու, կամ աւելի ճիշդ ըսենք՝ մեր մուրացիկ գործածած տոմարի օրերը Լատինաց ամսոց օրերուն հետ միացնելու: Այսր համար յատուկ ժողովներ ու դաւանութիւններ պահանջելու խորհուրդներ եղած են, և հասարակութիւնն իրաւամբ հետաքրքիր է իմանալու թէ ինչու 12 աւուր տարբերութիւն կայ մէջերնիս, և իրմէ կը յայտնէ թէ ո՛ր կողմի հաշիւն որ շիտակ է անոր հետեւելու ենք:

Օրինաւոր է այս խնդիր, և քանի որ խնդիրը կրօնական չէ, կամ թէ՝ եթէ կրնայ ունենալ կրօնական մաս մը՝ եկեղեցական տօնից նկատմամբ, զայն իր տեղի վճռականին մէջ թողլով իբր և եկեղեցական ժողովոց ձեռնհասութեան միայն վերաբերեալ, անոր զուտ գիտնական կամ աստղաբաշխական մասը ամէն ուսումնասիրաց հետաքննութեանը կը ձգենք, և այս մասն է միայն մեր այս քննածն ու քննելիքը:

Ու պէտք է քննել նախ՝ և միշտ աստղաբաշխօրէն խօսելով թէ Հայերու այսօր գործածած տոմարը՝ ամէնքն ժամանակից հաշիւը՝ ազգային տոմար չէ, այլ Հռոմայեցոց Յուլեան բարւոք հին տոմարն է, զորս աստղաբաշխական հաշւոց պակասները Նիկոզացիք ճանչելով լրած են զանի, և անոր տեղ ապագային նոր տոմար մը կը գործածեն այսօր՝ Գրիգորեան տոմարը: Եւ այս երկուքին մէջ եղած 12 աւուր տարբերութիւնը նահանջ տարւոյ հաշիւներէն միայն ծագած է որ Գրիգորեանին մէջ ուղիղ են: Գրիգորեան տոմարին հետ միանա-

նալու համար ազգայնոց յայտնած խղ-
ճը՝ այն ուղղութիւնն ընդունելու
փափաքն է միայն և ոչ այլ ինչ:

Զայս ուղղութիւնը նոյն տօմարէն առնելու համար ի՞նչ պէտք ունինք ժողովներու և վիճաբանութեանց, միթէ եւրոպացի արդի քաջագէտ աստղաբաշխից այսքան անգամ՝ փորձարկեալ հաշիւները կրկին մե՞նք ալ տի փորձենք, և դարձեալ՝ ի շնորհս ուղիղ կէտի մը՝ երկուք ալ սխալ կէտեր առնելու ի՞նչ պարտաւորութիւն կայ: Այդ չ'է մեր կարծիքը. Գրիգորեան տօմարին հետեւիլ չ'է կուրօրէն. այլ մեր խիղճը ազգային տօմար մ'ունենալ է որ արեւմտեան տօմարին թերութիւններէն այնչափ հեռանայ և դէպ ի յուղղութիւն և ի բանաւորութիւն այնչափ մերձենայ որ արեւմտեանք ցանկան օր մը իրենց տօմարը մերինին համաձայնել և մեր բնական տարեչափութեան հետեւիլ, երբոր սովորութեան գերութենէն ու նախապաշարմանց լուծէն զերծեալ՝ բանաւորութիւն բնտռելու ելլին այս մասին:

Ասի այսօր չ'է նէ, օր մը տի ըլլայ: Օրինակ մեզի՝ Յունասացւոց հընարած մեդրական դրութիւնը, որ հետզհետէ ընդունվելու վրայ է միւս ազգերէ, և տարակոյս չը կայ թէ օր մը համաշխարհային տի ըլլայ . և ասի՝ ո՛չ թէ այն ազգին աշխարհակալական ազդեցութեան շնորհիւը այլ շնորհիւ բանաւորութեան զոր կնիքը կը կըրէ այն դրութիւնը:

Մենք մեր ազգային տօմարին տարեբաշխական բարեկարգութիւնքը՝ Հայկազանց տօմարին նախնական ողւոյն հետեւելով և զանի Քրիստոսի թվականին համաձայնելով՝ ներկայ տարեցոյցիս մէջ ամփոփել փորձեցինք, զոր փոխանակ Հայկազեան անուանելու Բնական տարեցոյց անուանեցինք, զի ընդհանրապէս ամէն ազգաց և ամէն երկրի մէջ գործածվելու յարմար և ընդունակ կը կարծենք:

## ԲՆԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

Մինչեւ հօս ընդհանուր կերպով ըսվածներէն կրնայ գուշակվել այս տարեցոյցին ոգին ու ընթացքը. բայց ի խելամտութիւն հասարակութեան անօգուտ չենք համարիր անոր գործածական քանի մը մասնաւորութեանց որոշ բացատրութիւնը:

Յայտնի է թէ քրիստոնեայ ժողո-

վերջոց՝ Համար Քրիստոսի Թլփատու-
մին առջեւ՝ որ խաւարեցին ամէն ա-
ռաջ դարձուցած մանր ու մեծ մեծա-
նաւոր Թլփատումները. բայց ի բնական
է անհրաժեշտ այս Թլփատումէն, որ
մարդոյս անեղծմանէն Քրիստոսի, որ
միշտ կը տիրէ Հին պատմութեան մէջ,
ինչպէս Քրիստոսինը կը տիրէ Նոր
պատմութեան մէջ: Նախնի Հայկա-
կանց Թլփատումն ալ կը փոխադրէին
Թէպէտ Նոյեան մասնաւոր Թլփատման
անհրաժեշտական Թլփատման առջեւ, բայց
իր բնական ձեւն տարեմուտին կը
Համաձայնի նոր, երկուքն ալ զա-
նազանեն միեւնոյն, և մեզի Համար
Համաձայնութիւն է մեր ազգային պատ-
մութեանց և յիշատակութեանց մէջ:
Բայց ընդհանուր կերպով չենք կրնար
ազգային Թլփատումը վերացնել Քր-
իստոսի Թլփատումին որ բոլոր աշխար-
հը հինէն անջրպետած է բաց ա-
մենայնի՝ մարդկային ընկերութեան
դէմքին սրբագործելով: Ուստի այժմ
էր այս Թլփատումներու ազգայնական գի-
րութեամբ Քրիստոսի Համաձայնել՝ ամ-
էն ազգ միաւորութեամբ:

Զայս գիրք՝ բնական տարեմուտն
իր ուրը պաշտելով, որոնցն Գաղտնա-
մաց, և Քրիստոսի Թլփատումին առ-

նապետական յիշատակներէ՝ Հայկա-
կանց տօմարին հոգւոյն և խնամքին
հետեւելով է, միայն աւելի ճիշդ ա-
համաձայն բներէն առած ենք բնական
երեւոյթից՝ և շատերն աւելի ծա-
նօթ, որոց նշանակութիւնն ինքնին
իրենց արմատէն յայտնի է, առանց
խիստ մշակական յօդուածոց զոր աւելի
մեկնան քով գրած ենք ի պէտս ինչ
հաղորդութեան:

Այս մշակական անուանքը Թէ-
պէտ ամէն երկրի չեն կրնար յարմա-
րիլ՝ բնութեան երեւոյթներն երկրէ
ամէն կողմ միօրինակ չը պատահե-
լով, բայց բարեխառն գօտւոյն տակ
գտնուող երկիրներու համար՝ ուր ենք
խիստ յարմար են: Ուստի Թըւականն
և մշակական անուններն իրարմէ չը
զատելով մեկ միւսին իբրեւ բացա-
յայտիչ երկուքը մեկեն դրինք մեր
տարեցոյցին մէջ, որք միօրինակ ու
անշարժ կրնար գործածուիլ մեկ
միւսին տեղ:

Հին անուանց նկատմամբ՝ պէտք
բարեմասնութիւն մը նոյ աւելցնել
կարծեցինք, նորերուն վրայ՝ իւրա-
քանչիւր եղանակին ամսոց յատուկ
յանգ մը տալով, բատ կարգի նմանա-
ձայն եղանակին անուան, որպէս զի

մշակը՝ թէեւ իմաստին ալ ուշադիր չ'ըլլայ, կարենայ յանգէն իմանալ թէ այս ինչ ամիսը ո՛ր եղանակին մէջն է: Զորօրինակ ամառ՝ իր ամիսները Հնձար, Տօթար, Մրգար (կրճատմամբ իբր Հնձաբեր, Տօթաբեր, Մրգաբեր) Ձմեռ՝ իր ամիսները Ձիւներ, Սառներ, Մրրկեր (իբր Ձիւնաբեր, Սառնաբեր, Մրրկաբեր): Գարուն եւ Աշուն նըմանայանգ ըլլալով, անոնց ամիսները իրարու չըշփոթելու համար պէտք էր իւրաքանչիւրին ամսոց խումբն ալ եղանակէն այլայանգ ձայնով յորջորջել: Զարթին, Ծաղկին, Մարգին (իբր Զարթնային, Ծաղկային, Մարգային) Գարնան յատկացեալ. Կթօն, Թառմօն, Միգօն՝ Աշնան յատկացեալ:

Հիներուն վրայ երկրորդ բարեմասնութիւն մ'ալ զոր խիստ փոքրիկ համարելու չ'է, ամենեւեան օրերուն հաւասարապէս բաշխումն է 12 ամսոց վրայ: Այս բաշխումը այնպէս մ'ընել ուզած ենք որ՝ թէ՛ ամսագլուխները չըհեռանան կենդանակերպ աստեղատանց կէտերէն, եւ թէ՛ մշակը իսկոյն իմանայ անոր թուական անունէն թէ այս ինչ ամիսը քանի՛ օր կրնայ ունենալ:

Ասանկ այս ամենապարզ դրութիւնը. «Այն ամսին որոյ անունը անզոյգ թուով կ'ըսկսի, անզոյգ թուով կ'աւարտի այսինքն ունի 31 օր. այն ամսին որոյ անունը զոյգ թուով կ'ըսկսի, զոյգ թուով կ'աւարտի եւ ունի 30 օր, բաց ի երկտասանամսեան որ հասարակ տարւոյ մէջ 29 օր ունի, իսկ նահանջ տարւոյ մէջ կը լրանայ եւ կ'ունենայ ճիշտ 30 օր: Ինչպէս Նախամիս, Եռամիս, Հնգամիս, եայլն, ունին 31 ական օր. եւ Երկամիս, Քառամիս, Վեցամիս, եայլն, ունին 30ական օր:

Ահա ընական տարեցոյցին կարգադրութեան բոլոր պատճառներն ու բացատրութիւնքը որոնց վրայ կը հըրաւիրենք ճշմարիտ բանասիրաց ուշը:

Մենք այս կարգադրութիւնը ո՛չ թէ իբր քմածին նորաձեւութիւն մը կը ներկայացնենք մերազնեայ հասարակութեան, այլ իբր օգտակար բարեկարգութիւն հիմնեալ ի վերայ ընական գիտութեան եւ բանաւորութեան, նպատակաւ ազգային ուղիղ տոմար մ'ունենալու որ ցանկալի ըլլայ ամեն այլազգեաց: Չենք կրնար չը խոստովանիլ թէ ասոր ազգովին ընդունելութիւնն իղձ մըն է զոր շատուց ի վեր կը տածենք. չենք կրնար ըսել

թէ անտարբեր աչօք կը տեսնենք մենք մեր ազգին ստոր տմարդութեան մէջ մուրացիկ թափառումը, աստանդական կըւոյ ու ծոյլերէ հետեւիլը, այդ մի մանաւանդ որ ըղձամարն իւր հնարած և բղխական տարեչափութիւնն իւր հաստատած է զատկին։ Բայց ասոր հանդերձ՝ ամեն տեսակ նորոգութեան մէջ ժամանակին կից նախապաշարմունքն ու այլ և այլ գժտութիւնքն ալ անծանօթ չէին մեզի. և եթէ այսօր ազգը չ՚ընդունի քայակարգադրութիւնը, հոգ չ՚է. իւրաքանչիւր անհատ կրնայ ընդունիլ զանի և իր առանձին կարծօրութեանց մէջ ի կիր առնուլ ազատ է։ Իսկ եթէ ոչ ոք ընդունի, այն ալ շատ հոգ չ՚է, մեր բաղձանքը պարզերալ յայտած կը հանդիսցինք. քանզի մեր յոյսը մեր ժամանակի նորոգող ընդունելութեանը վրայ չ՚է կառուցեալ, այլ մեր յուսոյ և ըղձի մեծագոյն մասը ապագայ սերունդին վրայ է որ ժամանակակից կրքերէ ու նախապաշարմունքներէ ազատ աւելի յստակ և անկողմնակալ աչօք կրնայ տէ իւր Տօմարագրաց գործը։ Մեր դպրիւքեր պաշտպանած է կղերականի ծոյներէն մեր յաջորդաց հասցնելու միջոցը երաշխաւորելով։ Այս մեզի բաւական է։

Մեր ակնկալութիւնը ազգին մէջ արթնցած յառաջդիմութեան ոգւոյն վրայ է որ օրըստօրէ աւելի ու ծաւալի։ Մեր խօսքը թէ ներկայ և թէ յետագայ դարուն մէջ սկզբունքն այ է որ յանձնայնի ազգութեան, հարեկարչութեան և բանաւորութեան կուսակից կանգնիլ կ՚ախորժին նաեւ կին ծիծաղական երեւոյթ, անոր փոխան ընդունելով, քան թէ ծծած նախապաշարմանց ու անխմաստ սովորութեանց տակ դէպի Յանսաի և Արեւմ ծնրադիր մնալ. այնպիսեաց որք կը սիրեն բանական չասոյ հետեւիլ յառաջդիմութեան քաղաքակրթական դիք երկրպագել հետաքրքրեմամբ։ Այս թիւը ուր բազմենայ, մենք յառաջդիմութեան հաւատ ընծայողներէն ենք։

ՌՈՒՍԻՆԵԱՆ

7 Կիւն. 1871։



# ԵՐԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՆՀՈՒՆՔ ԵՒ ՅԱՒԻՏԵՆԱՆՔ

### Երկինք, հորիզոն եւ ամպայինք

Վերցո՛ւ աչերդ ընդ երկինք, ի՞նչ կը տեսնես. — կապոյտ գմբէթ մը հորիզոնին վրայ նստած ։ Եթէ արդարեւ այդպէս ըլլար, շարունակ մէկ ուղղութեան մը վրայ ճամբայ ընելով՝ տի տեսնէինք որ երկինքն երթալով կը ցածնայ, աստղերը կը մերձենան և վերջապէս տի ստիպուէինք՝ աւելի առաջ երթալու համար ծռիլ, յետոյ պառկիլ, որպէս զի կարենանք երկնից ու երկրիս ծայրը հասնիլ. բայց նայէ՛ որ այնքան ճամբորդներ երկրիս ամեն ուղղութեան վրայ պըտըտած են, ոչ կրցած են անոր մէկ ծայրը հասնիլ և ոչ երկինքը ձեռամբ շօշափել. ըսել է թէ այդ կապոյտ գմբէթն ուրիշ բան չ'է այլ մեր շընչած օդը որ մօտէն անգոյն կ'երեւի այլ հեռուէն գեղեցիկ կապոյտ գոյն մը կ'առնու, ինչպէս ծովին ջուրն որ իր աւազանին մէջ կապոյտ է և գաւաթի մէջ անգոյն, ինչպէս ճամբ որ

հաս հաս անդոյն է և վրայէ վրայ դիզված ամէն գունաւոր։ Ուրեմն մեր գլխուն վերեւ ոչ պատ կայ, ոչ կամար, այլ անսահմա՜ն տարածութիւն . . . ։

Ժամանակն ալ տարածութեան պէս ոչ ծայր ունի և ոչ ծօթ. այս երկու բառերն անբաժան գաղափարներ են իրարմէ, այնպէս որ անհնար է ըմբռնել մէկն առանց միւսին. առաջինը կը կոչվի անհունք կամ անսահմանութիւն, երկրորդը՝ յաւիտեանք կամ յաւիտենականութիւն։

Ահա այս երկու անբաժ և անսահման արգանդին մէջ գոյացած են ու կը գոյանան միշտ այն անհամար աշխարհները որոնք հեռուէն մանր լուսաւոր կէտեր կ'երեւին մեզի, և սակայն ի բաց առնլով անոնցմէ մէկ քանին, մնացածները բիւրաւոր անգամ մեծ են քան ըզ մեր երկիրը։ Տեսնենք ուրեմն թէ ուսկէ՛ և ի՛նչ օրինօք գոյութիւն առած ու ձեւացած են այն միլիոնաւոր աշխարհք որ առանց իրար խառնվելու և իրարու զարնըվելու կը հոլովին մեր գլխուն վերեւ։

Այն անսահման տարածութիւնը որ մեր շուրջը կը պատէ դատարկ չ'է, այլ լի ամենանուրբ նիւթով մը Եթեր կոչված որ ոչ կը տեսվի, ոչ կ'զգացվի, ոչ կը կշռվի։ Դիզէ՛ այս նիւթէս երկրէս մինչեւ լուսին, դի՛ր կշռի մը մէկ նժարին մէջ, կը տեսնես որ բընաւ չը խախտիր. չը կայ իրեն համար արգելք մը որոյ մէջէն չը կարենայ անցնիլ. ամենակարծր քարերուն ու մետաղներուն մէջ ազատ համարձակ կը մտնի կ'ելլէ։

Արդ այսքան նուրբ և այսքան մեծաքանակ նիւթ մը կարելի չ'է որ անսահմանութեան մէջ անշարժ կեցած ըլլայ։ Շարժումը կը գոյացնէ իր ծոցին մէջ այլ և այլ ձգողական կէտեր որք կարօղութիւննին համածին չափ իրենց շուրջը գտնվող եթերը կը քաշեն իրենց բոլորտիքը, կը խտացնեն զանի ու կը կազմեն առանձին առանձին գնտիկներ որ Հիւլէ կը կոչվին. յետոյ այս հիւլէները կ'ըսկսին մէկզմէկ քաշել և կ'ըլլան ամպային մարմիններ, որոց մէկ օրինակը կը տեսնենք գիշերը բաց երկընքին վրայ յարդգող անուանեալ։

Այս ամպայինները նախ կլոր ձեւով իրենց կեդրոնին վրայ կը դառնան ու հետըզհետէ կ'ըլլան ձուաձեւ. այս յեղափոխութիւնը օրվան մը, տարվան մը գործ չ'է անշուշտ, այլ մի-

լեռնաւոր դարերու, բայց սակայն ի՛նչ է դար մը յաւիտենից քով. մանրադիտական կէտ մ'ալ չ'է։

Այս ամպայինները շարժական հիւլէներէ բաղկացեալ ըլլալնուն համար շարժումն իրենց անհրաժեշտ յատկութիւնն է. ուստի ասոնք իրենց գոյութեան առաջին վայրկենէն ըսկըսած են տարածութեան մէջ ընթանալ։ Բայց ո՞ր ուղղութեամբ. — Նետէ՛ մարմին մը դատարկ միջոցի մը մէջ, ի՛նչ ուղղութիւն որ տուիր անոր՝ եթէ արգելք մը չ'ելլէ՝ նոյն ուղղութեամբ յաւիտեանս յաւիտենից տի շարունակէ իր ճամբան առանց երբէք կանգ առնելու։ Քար մը առ նետէ օդոյն մէջ. կը նայիս որ նախ ուղիղ գիծ մը գծելէ ետքը՝ կոր գծով մը վար կ'իջնի. եթէ մէկ դիէն օդը չ'ըլլար որ շօշափմամբ քարին արագութիւնը կը նուազէ և միւս կողմէն երկրիս ձգողութիւնը որ այն քարը դէպ ի վար կը քաշէ, այն քարը իւր առած ուղղութեամբ յաւիտեան տի շարունակէր զիր ընթացքը։ Այսպէս ալ տի ըլլար այն ամպայնոց համար, եթէ իրենց դէմ արգելք չ'ելլէին. նախնական մղմամբ մը մէկ ուղղութեան վրայ շարունակ տի ընթանային, բայց կը տեսնենք որ բընաւ այնպէս չ'է։ Ամէն մարմին որ կը շարժի միջոցի մէջ՝ երկու հակառակ զօրութիւններ կը բովանդակէ իր վրայ. մէկը ձգողական՝ որով քովի առարկաները իրեն կը քաշէ, միւսը վանողական որ անոնցմէ զինքը կը հեռացնէ. ահա այս երկու ընդդիմամարտ զօրութիւնոք է որ բիւրաւոր աշխարհներ իրարմէ միշտ հաստատ հեռաւորութեամբ կը պտըտին տարածութեան մէջ՝ առանց երբէք իրարու զարնուելու և իրար կործանելու. երկրորդ, ասոնցմով է որ այն աշխարհները՝ փոխանակ յաւիտեան մէկ ուղղութեան մը վրայ վազելու, իրարու բոլորտիքը կը դառնան ու կը կազմեն տիեզերական ներդաշնակութիւնը. իրենց մէջէն զօրաւորն ը[illegible] տկարն իր ճանկին մէջ կ'անցնէ [illegible] իր շուրջը կը դարձնէ. ինքն ալ իր[illegible]է զօրաւորի մը կը հանդպի և անոր բ[illegible]լորտիքը կ'ըսկսի դառնալ։ Օրինակ[illegible] մը բացատրենք չուան մը ա'ռ[illegible] ձեռքիդ մէջ դարձու, անդիէն քա[illegible] մը որ ուղղութիւն մ'առած ինքն[illegible] գլուխ կը վազէր՝ այդ չուանին հա[illegible]դիպի ու փակչի, ի՞նչ կ'ընէ այն ատեն. կը թողու իր ուղիղ գիծը և կ'[illegible]-

կըսի քու ձեռքիդ բոլորտիքը դառնալ. քու ձեռքդ կ'ըլլայ հզօր ամպային մը, չուանը անոր ձգողական զօրութիւնը, քարը տկար ամպային մը:

Այս է ահա այն զարմանալի օրէնքը որ ըզ բոլոր տիեզերք սքանչելի ներդաշնակութեամբ մը կը կառավարէ. այս օրէնքով կը դառնայ լուսինը երկրիս բոլորտիքը. երկիր, լուսին և այլ մոլորակներ արեւին բոլորտիքը. արեւը՝ ասոնց հետ մէկտեղ ուրիշ արեւի մը, այն ալ ուրիշի մը, և ամենքը տիեզերական աստղի մը որ իւր անհուն մեծութեամբը, ահեղ զօրութեամբը և ովկիանեան լուսովը կրնայ անսկիզբն ու անվախճան Էին աթոռ համարվիլ:

---

## ԱՍՏՂԱՅԻՆ ԳՕՏԻՔ

Ժամանակ անցնելէն ետքը՝ այդ լայնատփիւռ ամպայնոց մէջ այլ և այլ ձգողական կէտեր կը գոյանան, որոնք իրենց բոլորտիքը գտնուած նիւթը իրենց վրայ ժողվելով ու սեղմելով զանազան ամպային աստղեր կը կազմեն. այս նոր ամպայինք իրենց ձեւացած վայրկենէն կ'ըսկսին թէ մայր-ամպայնոյն և թէ իրենց բոլորտիքը դառնալ: Ասոնք իրենց ձգողական զօրութեան տակ ամփոփվելով պզտիկնալով հետզհետէ աւելի շուտ կը դառնան, և այն ատեն վանողական զօրութիւնը սաստկանալով իրենց հասարակածներուն վրայ՝ այն շրջանակները կեդրոնէն կը հեռանան և ձգողական զօրութիւնն ալ բեւեռներուն վրայ իւր զօրութիւնը բանեցնելով՝ զանոնք կեդրոնին կը մօտեցնէ. այս կերպով հասարակածները կ'ուռին, բեւեռները կը տափկանան և այն ամպայինները կ'ըլլան ձուաձեւ: Բայց հոս չը մնար վանողական զօրութեան գործը. հասարակածը այս զօրութեան տակ այն աստիճան կը հեռանայ կեդրոնէն՝ որ վերջապէս կը բրդի և հեռուանց պսակաձեւ իւր մայր-ամպայնոյն բոլորտիքը կը դառնայ: Ժամանակ անցնելէն ետքը նոյն վանողական զօրութեամբ երկրորդ գօտի մ'ալ կը գոյանայ, յետոյ երրորդ մը, մինչեւ որ այն ամպայինը ա՛լ սկսած ըլլալով խտանալ՝ չը կարենայ ուրիշ գօտի մ'ալ արտադրել: Դարձեալ այս գօտիներուն մէջ ալ շատ մը ձգողական կէտեր կը գոյանան, որոնք իրենց քովի նիւթը ժողվելով կ'ըլլան առան-

ձին գտնուէր որ մեծ ամպայնոյն բոլորտիքը կը դառնան. ասոնք են ահա մոլորակները որոնցմէ մէկն է մեր երկիրը. ասոնք ալ ձգողական զօրութեամբ միշտ սեղմվելով ու պզտիկնալով՝ աւելի շուտ կը դառնան և հետըղհետէ կ'ըլլան ձուաձեւ:

Ցետոյ մոլորակներէն կը բղխին մի և նոյն օրինօք արբանեակներ կամ լուսիններ:

---

## ՄԵՐ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Մեր արեգակնային դրութիւնը կը բաղկանայ նախ արեւէ մը՝ հիմն ու կեդրոն, յետոյ 8 գլխաւոր մոլորակներէ որք են Փայլածու, Արուսեակ, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երեւակ, Ուրանոս, Պոսիդոն, յետոյ 57 մանր մոլորակներէ որոնք մեծ ամպայնոյն վերջին գօտւոյն մէջ գոյացած են, և ասոնցմէ զատ 21 արբանեակներէ կամ լուսիններէ. և այս ամենը առանց իրար խառնվելու, առանց իրարու զարնըվելու, ներդաշնակօրէն կը շրջին տարածութեան մէջ:

Ասոնք ամենը առաջ մէկ մարմին էին, մէկ գունդ վերջին աստիճան նօսր որ իր կեդրոնին վրայ կը դառնար: Այս գունտն ալ բղխած էր այն ահագին ամպայինէն որոյ վերջին ծիրը կը տեսնենք երկնից երեսը պարզ գիշերները թեթեւ ամպի նման զոր յարդգող կոչեցինք:

Արեւին և իւր մոլորակաց իրարմէ որչափ մեծ կամ պզտիկ ըլլալը հասկընալու համար, 1,400,000 հատ ցորեն ա՛ռ, բոլորաձեւ դիզէ՛ տեղ մը և համարէ՛ թէ ասի արեգակն է. Փայլածուն այն ատեն ցորենի մը տասներորդ մասն է, Արուսեակը ցորենէ մը քիչ մը փոքր, Երկիրը ցորեն մը, Հրատը՝ մէկ եօթներորդ մասը, Լուսնթագը 1,406 ցորեն, Երեւակը 734, Ուրանոսը 82, Պոսիդոնը 110, լուսինը մէկ յիսներորդ: Եթէ կ'ուզես նաեւ գիտել Հրատի և Լուսնթագի մէջ տեղը գտված մանտրտիկ մոլորակաց միւսներուն նկատմամբ մեծութիւնն ալ, ցորենի հատ մը ա՛ռ, փշրէ՛ և իւրաքանչիւր փշուրը ենթադրէ անոնցմէ մէկը:

Հիմա՛ իրարմէ ունեցած հեռաւորութիւննին ալ ըմբռնելու համար, այն ցորենի կոյտէն կամ արեւէն 29 մետր հեռու դի՛ր Փայլածուն, 54 մ. հեռու Արուսեակը, 75 մ. հեռու Երկիրը, 112 մ. հեռու Հրատը, 590 մ.

հեռու Լուսնթագը, 712 մ. հեռու Երեւակը, 1422 մ. հեռու Ուրանոսը, և 2250 մ. հեռու Պոսիդոնը։

---

## ԱՐԵՒ

Ի՞նչ է արեւը. — Ինչ որ էր մեր Երկիրը միլիոնաւոր դարեր առաջ իւր անդրպատմական եղանակին մէջ. (Կարդա՛ այն Ցուրտացման վրայ Երկրորդ հատուածին մէջ Երկրաբանութեան)։ Արեւը հրբեղէն գունտ մըն է՝ բոցավառ կազերէ բաղկացեալ մթնոլորտով մը, որ հետզհետէ պաղելով՝ օր մը ան ալ ճիշտ մեր երկրին կերպարանը տ'առնու և ուրիշ արեւի մը լուսոյն տի կարօտի. բայց մի՛ սարսափիր, այս օրը ոչ վաղն է և ոչ վաղանդ, ոչ տարի մը և ոչ դար մը ետքը, այլ միլիոնաւոր դարերէ ետքը. ուստի առ այժմ մեզի համար վախ չը կայ և կրնանք այս կողմէն գոհ ապահով ըլլալ։ Դիտակով սեւ սեւ բծեր կը տեսնուին արեւին վրայ. աստղագէտները երկար ատեն շուարեալ մնացեր էին այս բծերուն առջեւ և չէին կրցեր գոհացուցիչ մեկնութիւն մը տալ. Հաւանելի կարծիքն այն է թէ հոն կատաղի մրրիկներ տեղի կ'ունենան՝ ինչպէս նաեւ կը պատահէին մեր երկրիս վրայ իւր այն տարիքին մէջ. որոնք տեղ տեղ կը պատռեն զայդ բոցավառ մթնոլորտը և այն ծակերէն արեւին սեւ գունտը կը ցուցնեն մեզի (1)։

Ինչպէս ամեն ամպայինք՝ այնպէս ալ արեւը երկու հոլովում ունի. մէկն ինքն իր վրայ որ կը տեւէ 25 1/2 օր և միւսը իւր մայրենի ամպոյնոյն բոլորտիքը որ կը տեւէ 18,200,000 տարի՝ մէկ մանրերկրորդի մէջ 2 մղոն տեղ առնելով։ Այս վերջին շրջանը կրնանք ըսել թէ անխախտ տի մնայ միշտ, բայց նոյնը չ'ենք կրնար ըսել ինքն իր վրայ հոլովման համար. որովհետեւ երթալով պաղելու ու խըտանալու վրայ է, հարկաւ իւր զանգուածը պզտիկնալով աւելի շուտ տի դառնայ իւր բոլորտիքը. վասն զի մարմին մը քանի խտանայ այնքան կը պզտիկնայ և եթէ այդ մարմինը

---

(1) Արեւը Երկրէն 1,400,000 անգամ աւելի մեծ է, և անկէ 156 միլիոն կիլոմետր (kilomètre) հեռի է։ Լոյսը որ մէկ վայրկենի (seconde) մէջ 308,000 կիլոմետր միջոց կը կտրէ, արեւէն Երկրի հասնելու համար 8 րոպէ 17 վայրկեան կը դնէ։

ինքն իր վրայ հոլովում ունի՝ քանի պղտիկնայ այնչափ աւելի արագ կը դառնայ իր բոլորտիքը։ Բայց իրաւ է թէ այս արագութեան աճումը այնքան անզգալի է որ հազիւ ասկէ քանի մը հարիւր հազար տարիներ ետքը աստղագնինք տի կարենան տարբերութիւն մը նշմարել. ուստի աս ալ մեզի հոգ մը չ'է, նա մանաւանդ որ ամենեւին փաստ մ'ալ չ'ունի։

---

## ԵՐԿԻՐ

Երկիրս արեւին շուրջը դարձող աստղերէն մէկն է որք մոլորակ կը կոչվին. ձեւն է ձուաձեւ, որոյ պատճառը որոշ բացատրած ենք մեր Երկրաբանութեան Ա. յօդուածին մէջ (տե՛ս այս տարուան միւս Բնական Տարեցոյցը)։ Երկու կերպ հոլովում ունի. մէկն ինքն իր վրայ որ կը տեւէ 23 ժամ, 56 րոպէ ու 4 վայրկեան. որով կը կազմէ ամբողջ օր մը և միւսը արեւին բոլորտիքը որ կը տեւէ 365 օր, 5 ժամ 48 րոպէ և 51 մանրերկրորդ որով կը կազմէ ամբողջ տարին։

Երկրիս տրամագիծը 6850 մղոն է. շրջապատը 21,600 մղոն, մակերեւոյթը 148,521,600 քառակուսի մղոն։

Երկրիս կլոր ըլլալուն՝ բաց աստղաբաշխական փաստերէ՝ շատ մը շօշափելի ապացոյցներ կան. նախ՝ եթէ տափարակ ըլլար, որքան ալ ընդարձակ ըլլայ այս երկիրս՝ մէկ ծայրը տի գտնէինք ու անկէ անդին անսահմանութիւնը տի տեսնէինք. բայց մինչեւ հիմա այսպիսի ծայր մը չը գտուելէն զատ՝ շատ ճամբորդներ մէկ կէտէ ճամբայ ելած են ու մի և նոյն ուղղութեան վրայ ճամբանին շարունակելով կրկին ի նոյն կէտն ընկած են. ահա անդիմադրելի փաստ մը աշխարհիս կլոր ըլլալուն. ասկէ զատ՝ եթէ ունենաս հորիզոն մը ծովով շրջապատեալ, նաւ մը այն հորիզոնին վրայ տեսած ատեն՝ եթէ դիտակով նայիս՝ նախ անոր կայմին ծայրերը կ'ըսկսիս տեսնել, յետոյ առագաստները և յետոյ ամբողջ նաւը. եթէ երկիրս տափարակ ըլլար, ինչո՞ւ մէկէն ամբողջ նաւը չը տի տեսնէիր։ Ասոնց պէս դեռ ուրիշ շատ փաստեր ալ կրնան բերուիլ երկրիս կլոր ըլլալուն վրայ, բայց մենք զայս երկուքը բաւական զօրաւոր կը համարինք։

Անգամ մ'որ ըմբռնեցինք երկրիս կլոր ու շարժական մարմին ըլլալը, շատ դիւրին է նաեւ ըմբռնել թէ

արեւը չ'է որ մեր բոլորտիքը կը դառ-
նայ այլ մենք արեւին բոլորտիքը:
Նախ՝ սա աղէկ գիտնալու է թէ մեր
աչքայ ամեն տեսածին կուրօրէն հաւ-
տալու չ'է, քանզի այս մեր աչերը թէ
և զքանչելի գործարաններ՝ սակայն
շատ անգամ մեզ կը խաբեն. ասոր հա-
մար նախախնամութիւնը այն աչե-
րուն ետին բանականութիւնը դրած
է, որպէս զի ասոր լոյսին տակ բռնենք
աչքերնուս մեզի ցուցած առարկաները
և ուղիղ տեսնենք զանոնք: Մարդ չը
կայ որ նաւի կամ կառքի մէջ ճամբայ
բրած ատեն՝ կարծած չ'ըլլայ թէ քովի
ծառերը կամ տուները կամ լեռներն են
որ կը քալեն. այսպէս ալ այս աշխար-
հիս կառք համարելով և մենք ալ մէ-
ջի ճամբորդները՝ մենք կը կարծենք
թէ արեւն ու աստղերն են մեր դըլ-
խուն վերեւ վազողները, բայց քիչ մը
մտածութեամբ իսկոյն մեր սխալ կար-
ծիքը կը շտկվին և կը համոզվինք թէ
մենք ենք ճամբորդը:

Ընթադրենք թէ իրօք երկիրս կե-
ցած է և արեւն անոր բոլորտիքը
կը դառնայ. արդ արեւը՝ բուն աստ-
ղաբաշխական ճիշտ հաշուոց 156
միլիոն հիլամեդր հեռու ըլլալով
երկրէս և ստիպված ըլլալով ամեն

որ շրջան մը կատարելու մեր բո-
լորտիքը՝ պէտք է որ մէկ վայրկենի
մէջ 400.000 հիլամեդրէն աւելի ճամ-
բայ կտրէ. անշուշտ այսպիսի արա-
գութիւն մը կարող է մե՞ր երեւակա-
յութիւնը ցնորեցնելու, բայց նայէ՛
թէ միայն արեւը չ'է որ մեր շուրջը
կը դառնայ, բիւրաւոր աստեղք 'ա-
րեւին պէս մէկ կողմէն կ'ելլին, միւս
կողմէն կ'իջնին. ըսել է թէ անոնք ալ
արեւին նման մեր բոլորտիքը կը դառ-
նան. բայց պէտք է գիտնալ թէ ա-
նոնք ալ ամեն մէկը մէյմէկ արեւ են
և իրենց անհուն հեռաւորութեանը
համար լուսաւոր կէտեր կ'երեւին մեր
աչաց. անոնցմէ ամենէն մօտը 30,000
անգամ հեռի է մենէ քան զարեւը:
Ուստի 24 ժամվան մէջ երկրիս բո-
լորտիքը շրջան մը կատարելու հա-
մար մէկ բոպէի մէջ պէտք է որ
30,000 անգամ 400,000 հիլամեդր մի-
ջոց կտրեն. եթէ ամենէն մօտիկը
այսպէս, հապա ի՞նչ տ'ըլլայ միւս
աստեղաց համար որ քան զանի բիւ-
րապատիկ հեռագոյն ըլլալով բիւ-
րապատիկ անգամ աւելի միջոց պէտք
է որ կտրեն: Եթէ զանգուածնին
(masse, volume) նկատենք, արեւը
միայն երկրէս 1,400,000 անգամ ա-

ւելի մեծ է, աստղերը քանի մը միլիոն անգամ արեւէն մեծ են. արդ՝ առանք դիտնալէն ետքը՝ ի՞նչպէս կարելի է ըմբռնել թէ այսքան ահագին զանգուածներ՝ որոց քով մեր երկիրը մրջիւնի չափ ալ չը կայ, այնքան հեռաւորութենէն մեր շուրջը պտըտին. ո՞ւր կը մնայ հապա Կալիլէայ գտած ծանրութեան օրէնքը, այն գիտութեան մարտիրոսին թափած ճգանց արդիւնքը։ Ո՞ւր կը մնայ Նեւտոնայ հռչակած այն հրաշալի օրէնքը որ ըզհամայն տիեզերքը զմայլելի ներդաշնակութեամբ մը կը կառավարէ. ըսել կ'ուզենք այն տիեզերական ձգողութիւնը որոյ զօրութեամբ բնութեան մէջ ամեն մարմիններ զիրար կը քաշեն զանգուածին առաւելական համեմատութեամբն ու հեռաւորութեան քառորդին նուազական համեմատութեամբը. պարզ խօսքով ըսել է՝ ո՛րքան մեծահատոր ըլլայ մարմին մը, այնքան աւելի կ'ըլլայ իր ձըգողական ոյժը ուրիշ մարմնի վրայ. և որչափ հեռաւոր ըլլայ նոյն մարմինէն, այնչափ կը տկարանայ իր ձգողական զօրութիւնը նոյն մարմնին վրայ։

Գիտունք չ'են որ հնարեցին զայս օրէնքը այլ Արարիչն է զանի հնարողն ու հաստատողը բնութեան մէջ. գիտնոց ըրածը՝ բնութիւնը զննելով զանի գտնել ու հռչակել է միայն ի փառս ամենակարող Էին։

Այս աստուածային օրինաց հակառակ՝ որ անխախտելի են բնութեան մէջ, ի՞նչպէս հնար է որ երկիրս՝ միւս աստեղաց քով տկար մարմին մը՝ զանոնք բոլորն իր ձգողութեան մէջ առնու և իւր շուրջը դարձնէ։ Այսպիսի մեքենականութիւն մը չը կրնար երբէք իր բացառութիւնն ունենալ և խելքի հակառակ է։ Կը հարցվի՝ ի՞նչպէս Աստուած՝ որոյ ամեն գործոց մէջ այնպիսի կարգ ու ներդաշնակութիւն կը նշմարվի որոյ գեղեցկութեանն առջեւ մարդկային միտքը զարմանահար կ'զգետնի, ի՞նչպէս այն յաւիտենից իմաստութիւնը այնպիսի մեքենայ մը յօրինած ըլլայ որ ոչ պատճառ ունենայ ոչ օրէնք։ Հանե՛նք ուրեմն մեր մտքէն այդ ծուռ գաղափարը, և ուսնինք աւելի լա՛ւ ճանչել զԱստուած։

Երկրիս արեւին բոլորտիքը կատարած շրջանը ճիշտ կլոր չ'է այլ ձուաձեւ, և արեւն ալ այս շրջանակիս ճիշտ մէջ տեղը չ'ընկնիր, այլ աւելի

մէկ կողմը, և ձմեռ ատեն երկիրս աւելի մօտ է արեւին քան ամառը. սակայն այս տարբերութիւնը այն տարածութեան մէջ ոչինչ ըլլալով՝ ազդեցութիւն մը բնաւ չ'ըներ երկրիս վրայ. իսկ եղանակաց փոփոխութեան պատճառը երկրիս արեւին նկատմամբ ունեցած դիրքէն է զոր տի բացատրենք: Բաւական է զայս դիրքը աղէկ մ'ըմբռնել, բոլոր օրերուն ու եղանակաց փոփոխութիւնքն ինքնին կը պարզին:

Արդ այս բանիս աղէկ խելամուտ ըլլալու համար կլոր սեղանի մը վրայ ճրագ մը դիր, յետոյ ա'ռ նարինճ մը և ճիշդ մէջտեղէն շամփրի մը մէջ անցու, ճրագն է արեւը, սեղանին բոլորտիքը երկրիս շրջանը, նարինճը երկիր, այն երկու կէտերը որոնցմէ մտած ու ելած է շամփուրը՝ կ'ըսվին բեւեռ, շամփուրը՝ երկրիս առանցքը. մարդիկ այս մտացածին կէտերն ու գծերը տուած են երկրիս՝ անոր դիրքն ու շրջանը բացատրել կրնալու համար: Արդ, այն շամփրին երկու ծայրերը երկու ձեռացդ մէջ ա'ռ. ձախէդ աջ շեղ ուղղութեամբ մը և այն շամփրին երկու ծայրերը մատներուդ մէջ ոլորելով երեսդ միշտ մէկ կողմ տուած սեղանին կէս բոլորը պտըտէ'. միւս կէս բոլորը անցած ատենդ՝ հակառակ կողմը դարձիր որպէս զի երեսդ միշտ ճրագին ունենաս, և նոյն կերպով միւս կէս բոլորը պտըտէ. նարինճին այս դիրքիս մէջ կանթեղին բոլորտիքը դառնալը՝ ահա ճշտիւ երկրիս արեւին բոլորտիքը դառնալը կը ներկայացնէ: Հիմա այսպէս պտըտած ատենդ աղէկ դիտէ' նարինճը. կը տեսնես որ երկու բեւեռներէն մէկը սեղանիդ ամբողջ կէս շրջանին մէջ միշտ ճրագին կը նայի ու միւսն ըստուերի մէջ կը մնայ, յետոյ միւս կէս շրջանը անցած ատենդ կ'ըսկսի միւս բեւեռը լոյս տեսնել և առջինը մութը կը մնայ. ասոր համար է որ երկրիս իւրաքանչիւր բեւեռը վեց ամիս ցերեկ և վեց ամիս գիշեր ունի. ահա մէկ մեծ գաղտնիք մը որ իսկոյն պարզեցաւ: Դարձեալ այդ շրջանիդ մէջ կը հասնիս երկու հակառակ կէտերու ուր կը տեսնես թէ նարինճիդ երկու բեւեռներն ալ հաւասարապէս ցերեկ և հաւասարապէս գիշեր ունին, և ոչ միայն այն երկու բեւեռները՝ այլ նարինճին ամեն կէտերը. ուստի կը հետեւցնես թէ երկիրս այն երկու կէտերուն վրայ գտնված ատեն՝ իր

այն կէտերուն վրայ գիշեր ու ցե-
րեկ հաւասար են. ասոնք են ահա եր-
կու գիշեր-հաւասարները որոց մէկը
կը հանդիպի Մարտին 21ին և միւսը
Կլթօն 21ին: Դարձեալ պտըտէ՛ ու դի-
տէ՛, կը տեսնես թէ այն կէտը որ կան-
թեղին ճառագայթները դիմացէն
կ'առնէր, հետըզհետէ կ'ըսկսի քովէն
առնուլ. ըսել է թէ ամառէն ի ձը-
մեռ կ'անցնի, քանզի բնական է թէ
քովընտի զարկած ճառագայթները
դիմացէն զարկածներուն չափ ջեր-
մութիւն չեն կրնար ազդել, և ասոր
հակառակ այն կէտն որ քովէն կ'առ-
նէր ճրագին լոյսը՝ հետըզհետէ կ'ըս-
կըսի դիմացէն առնուլ և կը հետեւի
թէ ձմեռէն յամառ կը դիմէ: Հիմա
տեսնենք թէ օրերը կամ գիշերը ին-
չէ՞ն կը կարճնան ու կ'երկըննան. դի-
տէ դարձեալ թէ այն կէտերն որ
կանթեղին լոյսը դիմացէն կ'ընդու-
նին՝ իրենց շրջանին երկու երրորդ
մասին վրայ զանի կը տեսնեն, ըսել
է թէ 15 ժամ օր և 9 ժամ գիշեր
կ'ունենան. իսկ այն կէտերն որ կան-
թեղին ճառագայթները քովընտի
կ'ընդունին՝ իրենց շրջանին երկու
երրորդ մասամբ մութի մէջ են և մէկ
մասամբ լոյս կը տեսնեն. վերջապէս

այս ամէն փոփոխութիւնքը զոր ամէն
օր կը տեսնենք, երկրիս արեւին նը-
կատմամբ ունեցած դիրքին և շրջա-
նին բնական հետեւանքներն են զոր
ահա նարընջի մը վրայ ալ կրնանք
նշմարել: Այս դիրքը տալէ ետքը՝
չենք կարծեր թէ ալ հարկ ըլլայ բա-
ցատրել թէ ինչո՛ւ մէկ կիսագնտի վը-
րայ ցերեկ եղած ատեն միւս կիսա-
գնտին վրայ գիշեր է. մեր նարինջը
յայտնի կը ցուցնէ զայդ ամէնը:

---

ԼՈՒՍԻՆ

Այն մարմինները որ մոլորակի մը
շուրջը կը պտըտին՝ ինչպէս մոլորակ-
ները արեւին բոլորտիքը՝ աստղա-
բաշխօրէն արբանեակ կը կոչուին, և ո-
րովհետեւ անոնցմէ մէկն ալ լուսինն
է, ուստի լուսինն է արբանեակ մը որ
27 օրուան, 7 ժամուան և 45 րոպէի
մէջ կը դառնայ երկրիս բոլորտիքը,
անոր շառաւիղին 60 պատիկ հեռու-
էն, ըսել է թէ 1 ժամի մէջ 922 մղոն
տեղ կը վազէ. խելքէ մտքէ վեր ա-
րագութիւն մը. բայց սակայն մեզի
համար՝ որ այնքան հեռուէն կը դի-
տենք զանի, այս արագութիւնը այն-
քան կը նուազի որ պարզ աչօք ան-

կարող կ'ըլլանք զանի նշմարելու և հաշուով կը գտնենք: Լուսինն ալ երկրիս պէս իւր լոյսը արևուէն կ'առնու և անոր ալ զանազան կերպարանքը երկրիս և արևուն նկատմամբ ունեցած զանազան դիրքերէն պատճառած են: Ուստի երբ ճիշդ արևուն ու երկրիս մէջտեղը գայ, անտեսանելի կ'ըլլայ մեզի թէև մեր դիմաց կեցած է. վասն զի իր մութ կողմը մեզի կը դարձնէ: Բայց որովհետև լուսինը միշտ այն դիրքին մէջ չը մընար և ըսինք թէ երկրիս բոլորտիքը կը դառնայ, ուստի քանի որ վեր կը բարձրանայ՝ իր լուսաւոր կողմը կը ցուցնէ մեզի, և երբ երկիրս արևուն ու լուսնին մէջտեղը կու գայ կ'ընկնի, այն ատեն լուսնին ամբողջ լուսաւոր կիսագունդը կը տեսնենք: Օրինակով մը որոշ հասկցնենք. մարդ մը դիմացդ կեցո՛ւ կռնակը քեզի դարձած, այս դիրքիս մէջ հարկաւ անոր երեսը չես տեսներ. ըսէ՛ այն մարդուն որ միշտ երեսը նոյն կողմը տուած՝ քու շուրջդ պտըտի. քանի մը քայլ առածին պէս տի սկսիս քիչ մը անոր երեսը տեսնել, երբ շրջանին կէսը կատարէ անոր ամբողջ երեսը տի տեսնես. երբ միւս կէս շրջանն անցնի՝ դարձեալ

ընմուտը՝ երբեք չնորհական և միանգամայն քնքշագրական տարեմուտ ատեղական անոնց՝ Ծննդկան տօնին ամենամերձ գալած ատեղական որոշ կետին կատեցինք պյուինքն ձմեռնամուտին (1) որ Լատինաց Ծննդեան չորս օր առաջ է: Այս տարեմուտով չնորհական տարուան ամսիները կատարելապէս կը միաւորին ընական կամ աստղաբաշխական ամսագլխոց, և ասով ընական ամիսներ Քրիստոսի թըվականին մէջ անշփոթ կերպով կըրնան գործածուիլ առանց ընաւին խոչընդոտի, մանաւանդ, եթէ սկիզբները ընդհանուր դիւրութեան կամ օտարաց ու անփորձից դիւրըմբռնելի ընելու համար, Լատինաց կամ Յունաց ամսոն ալ միանգամայն քովէ թուականութեան մէջ, զորօրինակ այսպէս՝ 1872 [illegible] Գ

Ասով Լատինացն 11 օր առաջ

---

(1) [illegible]

սկսած կ'ըլլանք տարին, ինչպէս Լատինք 12 օր առաջ կ'ըսկսին Յունուացմէ: Այս գուցէ նոր շփոթութեան առիթ մը թըւի ոմանց, խորհելով թէ՝ երկու անհամաձայն թւականաց քով երրորդ մ'ալ աւելցաւ. իրաւ այնպէս կ'ըլլար եթէ անոնց գործածած մի և նոյն բառերը մենք ալ գործածէինք, և օրինակի համար՝ երկու յունվարներու քով երրորդ յունվար մ'ալ հանէինք, իրարմէ 12 ական օր տարբերութեամբ. իսկ մենք չըտի ըսենք Յունվարի 1, 12, 24, հապա յունվարներու մէկը կամ միւսը տի դնենք մեր բնական ամսոյն հետ ինչպէս վաղուց անտի կ'ընենք մեր Յայսմաւուրաց մէջ, զորօրինակ Արեգի 1 և Մարտի 9: Եւ եթէ ուզվի աւելի ճշդել թէ ո՛ր մարտն է, դժարին չ'է Յ. կամ Լ. գլխագիրն աւելցնել Յունաց կամ Լատինաց նշանակելու համար:

Բնական ամիսները ամէն տօմարի մէջ և ամէն թվաբերութեան հետ կրնան վարվիլ. բաւական է որ տարեմուտը չորս եղանակներէն մէկուն սկիզբէն սկսած ըլլայ կամ գոնէ աստղաբաշխական ամսագլխոց մէկէն, բայց բնական տարեմուտը՝ այսինք Գարնամուտը ամսոյն գլխէն չըխախտելով. ինչպէս որ կը վարվին ստեղծման և Հայկազանց թվականին հետ որք Գարնամուտէն կ'ըսկսին:

Ամսոց թուական անուանքը ամենէն աւելի բնական և բանաւոր անուններն են որ հողագնտիս ամէն կողմի համար կիրառելի և ընդունելի ըլլալու յարմարութիւն ունին: Առաջին մարդիկ ալ սկզբանէ այսպէս կը գործածէին, որբազան պատմութեան վկայութիւնը բաւական է. «Եւ յամսեանն եօթներորդում նստաւ տապանն ի լերինս Արարատայ». «Յամսեանն առաջնում որ օր մի էր ամսոյն, նուազեաց ջուրն և եբաց Նոյ զձեղուն տապանին»:

Ջրհեղեղէն ըզկնի, ազգաց ու լեզուաց բաժանմանէն ետքը սկսան մարդիկ այլ և այլ երկիրներու մէջ այլ և այլ մասնաւոր անուններ տալ ամսոց: Եղանակաց և բնութեան երեւոյթից համեմատ՝ ամսոց մշակական անուններ տալու առաջին գաղափարը Հայկայ է որոյ սերունդը մինչեւ ցայսօր պահած է զանի թերեւս յանդէտս օտարաց, և որոյ համար իրաւամբ պարծելով հին հեղինակաց մէկը, անոր աստուածատուր ձրից մէկը սեպելով իր տօմարն ալ, կ'ըսէ համարձակապէս Հայկազանց համար՝ թէ Աստուծ-

մէջտեղին [illegible]
[illegible]
կը թուի թէ մեր [illegible] դիտողին [illegible] հայերը [illegible] ճշգրտապէս [illegible] թռչնոց ու կենդանաց [illegible] դիտող երեւակայութեան մարմնոյն։ Ամենէն երկար [illegible] իր նկարին մէջտեղին, որոնք [illegible] անուններ [illegible] և Ալպեան [illegible] (ինչպէս որ Հիւսիսային ու [illegible] կը [illegible] նախկին կարգով մէջ)։ Իսկ Նշանա- [illegible] կը [illegible]։

Ձմեռ [illegible] գիշեր [illegible] կ'ըլլայ [illegible] և [illegible] Հիւսիսային [illegible] կայ [illegible] Ասիա [illegible] Հիւսիսային [illegible] ծովէն [illegible] «Հայկայ [illegible] Սկիզբ [illegible]» [illegible] կը [illegible]։

Մերձաւոր [illegible] կը [illegible]

---

տի սկսիս մէկ մասը տեսնել, մինչեւ նորէն հասնի դիմացդ և այն ատեն ալ բնաւ չը տի տեսնես. ահա լուսինն այն ատեն ամբողջ շրջան մը կատարած կ'ըլլայ քու կամ երկրիս բոլորտիքը։

Լուսինը երկրէս 49 անգամ պզտիկ է, բայց միւս աստղերուն չափ մեծ հեռու չըլլալուն համար բաւական մեծ կ'երեւի մեզի։ Դիտակով լուսնին վրայ լեռներ, ձորեր, ծովեր ու դաշտեր կը տեսնեն, որոց աստղագէտները մէյմէկ անուն տուած են, ինչպէս Նեքթարի ծով, Կոպերնիկոսի լեռ, եայլն։

---

## ԽԱՒԱՐՈՒՄ

Արեգական կամ լուսնի խաւարումը՝ որ ռամկին համար միշտ երկնային պատուհաս մը կամ սպառնալիք մը համարուած է, բնական հետեւանք մըն է երկրիս և լուսնին կատարած շարժմանցը. երբ որ այս երկու մարմիններն իրենց շրջանին մէջ անանկ դիմացէ դիմաց գան որ մէկին շուքը մէկալին վրայ զարնէ կամ արգելք ըլլայ որ արեւը չը տեսնի մեզի, խաւարում կ'ըլլայ։

Երբոր երկիրս, լուսինն ու արեւը մէկ ուղիղ գծի մը վրայ գան, այն ատեն լուսինն իր շուքը երկրիս վրայ կ'արձկէ եւ զարեւը մենէ կը ծածկէ. այն ատեն ահա արեւի խաւարում կ'ըլլայ: Իսկ երբ լուսինը, երկիրս ու արեւը մէկ ուղիղ գծի վրայ գան, այն ատեն երկիրս իր շուքը լուսնին վրայ կը ձգէ եւ լուսինը կը խաւարի: խաւարումն երկու կերպ կ'ըլլայ մասնական եւ ամբողջական. մասնական կ'ըսուի խաւարումը՝ երբոր ամբողջ չ'ըլլար, ըսել է թէ այն երեք մարմինները շիփշիտակ գծի մը վրայ չ'են գար եւ զիրար ամբողջ չ'են գոցեր. ամբողջական կ'ըսուի երբոր խաւարումը կատարեալ կ'ըլլայ:

---

ԳԻՍԱՒՈՐՔ

Գիսաւոր կ'ըսուին այն աստեղք որ ետեւներնէն երկընցած մազի պէս լոյս մ'ունին: Աստղագէտք դեռ համամիտ չ'են այս մազանման լոյսին վրայով. բայց հաւանական կարծիքն այն է թէ անոնց գունտին վրայի լուսաւոր մթնոլորտն է որ սաստիկ արագութեամբ վազելու ատեննին ետեւնին կը մնայ ու պոչի պէս երկարաձգեալ կ'երեւի: Ասոնք ալ թէ իրենց առանցքին վրայ եւ թէ արեւին բոլորտիքը կը շրջին, բայց երբեմն սաստիկ կը հեռանան անկէ ու երբեմն սաստիկ կը մօտենան. իրենց շրջանը տակաւին չափուած չ'է. միայն մէկ քանի գիսաւորաց շրջանը չափած են երեւելի աստղաբաշխք. ինչպէս Հալլէյ աստղաբաշխը գիսաւորի մը շրջանը գուշակեց որ գրեթէ 76 տարուան մէջ կը դառնայ արեւին վրայ: Հէնքէ աստղաբաշխին գտածն ալ 5 տարուան մէջ կը լմնցնէ իր շրջանը:

Արդ կը տեսնենք թէ այդ գիսաւորներն ալ՝ որոց վրայ այնքան այլանդակ մեկնութիւններ տրուած են ագիտութեան եղանակներու մէջ, երկնային մարմիններ են եղեր՝ երկնից փառաւորութիւնն աւելցնելու համար ստեղծուած, եւ կը տեսնենք գոհութեամբ՝ թէ մարդկային նախապաշարմանց խաւարները այսօր այսպէս մէկիկ մէկիկ կը փարատին գիտութեանց ջահին դիմաց:

Այսչափս բաւ համարելով երկնային մարմնոց վրայ, իջնինք երկնից կամարներուն տակ ու քանի մը բառ ալ օդագնտին մէջ պատահած բնական երեւութից վրայ խօսինք:

# ՕԴԵՐԵՒՈՅԹՔ

Օդ կամ մթնոլորտ կ'ըսուի երկրիս չորս դին պատած թոյլ ու թափանցիկ մարմինը, որոյ բարձրութիւնն ընդհանրապէս 50,000 մետր է։ Այս թափանցիկ մարմինը՝ որ անհրաժեշտ է կենսաւոր մարմնոց (1), 21 մաս հրածին (oxygène) և 79 մաս օդածին (azote) կազերէ խառնուրդ մըն է։

Օդոյն խտութիւնն ամեն տեղ միակերպ չ'է. նախ երկրիս մօտ եղած տեղերը աւելի թանձր է քան վերեւը, վասն զի վերի խաւերուն ծանրութենէն վարի խաւերը (couche) կը ճնշին. ասոր համար թանձր տեղեր մարդ դժուարաւ շունչ կ'առնու։ Երկրորդ՝ տեղ տեղ օդը կը ցրտանայ, տեղ տեղ ալ տաքէն կ'ուռի ու կ'անդայտանայ։

Օդերեւոյթ կամ Մետէօրայ կ'ըսուին օդոյն մէջ տեսուած բնական երեւոյթքը, որք չորս տեսակ են. Օդեղէն, Ջրեղէն, Լուսեղէն և Հրեղէն։

---

(1) Մէկ մարդ մէկ ժամուան մէջ 6 մետր խորանարդ օդ կ'սպառէ շնչառութեամբ։

## Ա. ՕԴԵՂԷՆ ՄԷՏՕՐԱՅՔ

Այս մէտօրայք օդոյն այլ և այլ շարժումներէն կը գոյանան, ինչպէս հով, մրրիկ, փոթորիկ, Սամում, խորշակ, և լն։

1. Հով կ'ըսուի օդոյն շարժումն ու տեղէ տեղ փոխվելու յուզումը, որ տաքէն ու պաղէն կը պատճառի. տաքէն օդը կ'ուռի կ'անդայտանայ ու թեթեւնալով վեր կը վազէ. ցուրտէն կը խտանայ ու ծանրանալով դէպ ի անդայտացեալ կողմը կը վազէ. ասով՝ օդային վազեր (courents d'air) կը գոյանան որ հով կ'ըսուին։

Եթէ երկու մօտակայ երկիրներէն մէկն աւելի տաքնայ քան ըզմիւսը, հով կը բղխի վարէն ու պաղ երկրէն դէպ ի տաքը կը վազէ, և հով մը կ'ելլէ վերէն որ տաք կէտէն դէպ ի ցուրտ կէտը կը վազէ։ Ասոր համոզվելու համար՝ ձմեռը տաք սենեկի մը դուռը բա'ց ցուրտ սենեկի մը վրայ, ու երկու ճրագ դիր մէկը դրան վերի կողմը և միւսը վարի կողմը. բոցերու հակումէն կը տեսնուի թէ ցուրտ օդավազ մը դրան վարի կողմէն սենեկին մէջ կը մտնէ ու տաք օդավազ մը վերի կողմէն դուրս կ'ելլէ։ Քանի որ օդոյն տաքութիւնն ու հետեւաբար

անոր խոնաւութիւնը հաւասար ըլլայ ամէն կողմ. զուգակշռութիւնն աւրըւած չ'է և օդն անշարժ կը մնայ։

Հովերն ընդհանրապէս կանոնաւոր են և փչելու ատեննին յայտնի է. առաւօտն արեւելքէն կը փչեն, կէսօրը հարաւէն, իրիկունը արեւմուտքէն, կէս գիշերուն հիւսիսէն։ Բայց այս կարգն ամէն տեղ միակերպ չ'է երկրիս այլ և այլ բարձր ու ցած դիրքերուն համար. հասարակածին տակ ամէն օր այս կարգը կը պահուի, և որչափ որ դէպ ի բեւեռները մօտեցուի, այս կարգն ալ կը փոխուի։

Կողմնացոյցներու վրայ նշանուած 32 տեսակ հով կայ որոց ուսումը ծովապետաց հարկաւոր է. ասոնց գըլխաւորքն 8 են որ աշխարհիս չորս կողմէն և անոնց մէջտեղէն կը փչեն։

Հովին ընթացքը ամէն տեղ ու ամէն ատեն միակերպ չ'է. ընդհանրապէս հասարակածին տակ խիստ սաստիկ կ'ըլլայ։

Խիստ հանդարտ հովն որ հազիւ կ'իմացուի, մէկ ժամուան մէջ 3400 ոտնաչափ տեղ կը վազէ. միջակ հովը 20,000. սաստիկ հովը 200,000. մրրիկը 300,000. սաստիկ փոթորիկը 480,000, որ այրեցած գօտւոյն տակ այնքան ուժով կ'ըլլայ որ ծառերն արմատէն և շէնքերը հիմէն կը խլէ։

2. **Թաթառ** կ'ըսուի երբոր երկու դիէն երկու հակառակ հով դիմացէ դիմաց ելլեն ու իրարու պլլուելով ամպերն երկինքէն վար իջուցնեն։ Թաթառն երկու տեսակ է՝ ծովային ու ցամաքային։ Ծովային թաթառը մինչեւ 80 ոտնաչափ հաստութիւն կ'ունենայ. ասի ծովին ջուրը տակն ու վրայ կ'ընէ ահագին շառաչմամբ, ու քիչ մ'ատեն ծովին հետ կպած անշարժ մնալէն ետքը յանկարծ կը ցըրուի։ Իսկ ցամաքայինն երկայն բարակ կ'ըլլայ, ու գետնին վրայ ասդին անդին քալելով՝ դիմացն ելածը կ'աւրէ, կը կոտրէ ու կը կործանէ։ Թաթառով վեր կ'ելլեն այլ և այլ իրեր՝ խիճ, աւազ, գորտ, ծծումբ, ցորեն, գարի, և այլ. և իբրեւ նորանշան անձրեւ երկնքէն կը թափթըփին այլ և այլ տեղեր։

3. **Խորշակ** կ'ըսուի այն վնասակար տօթաշունչ հովը որ ապականեալ լճերու կամ տապ անապատներու վրայէն փչելով թէ մարդոց և թէ անասնոց կը վնասէ։

---

## Բ. ՋՐԵՂԷՆ ՄԷՏՕՐԱՑՔ

Գետնէն ելած գոլորշիներէն կը գոյանան ջրեղէն մետորայք որք են՝ մէգ, ամպ, ցօղ, եղեամ, անձրեւ, ձիւն և կարկուտ։

1. Մէգ կամ մառախուղ կ'ըսուին գետնէն ելած այն ջրային գոլորշիքը որ օդոյն պաղութենէն վեր չը կրնալով ելլել երկրիս երեսը կը մնան։

2. Ամպը կը գոյանայ արեւին տաքութենէն վեր ելած այն ջրոյ գոլորշիներէն որ օդոյն պաղութենէն խտացեալ՝ կամաց կամաց վար իջնելով ու իրարու մօտենալով կը թանձրանան, թափանցկութիւննին կը կորսնեն և օդոյն մէջ կը շարժին կամ կը կենան։ Ամպերն երկրէս մինչեւ 18,000 ոտք բարձր կրնան ելլել. անկէ վեր սաստիկ ցուրտ ըլլալով կը ծանրանան ու չեն կրնար աւելի բարձրանալ։

3. Ցօղն է գիշեր ատեն դաշտերու վրայ իջած անձրեւի պէս թացութիւնը։ Գիշերվան ցրտութենէն երկրիս վրայի մարմինները կը պաղին. բայց ամենքն ալ հաւասար չ'են պաղիր, այլ ոմանք շատ՝ ոմանք քիչ, թէ իրենց կազմուածքին և թէ իրենց դիրքին պատճառով։ Բնութեամբ շատ պաղ մարմնոց վրայ շատ գոլորշի կը նստի, իսկ անոնք որ քիչ կը պաղին կամ ամենեւին, վրանին քիչ ցօղ կ'իջնի կամ ամենեւին չոր կը մնան։

Ցօղն աւելի առաւօտվան դէմ կ'իջնի քան թէ իրիկունը կամ գիշերը. վասն զի մինչեւ առաւօտ երկրիս վրայի մարմիններն երթալով աւելի կը պաղին։ Ցօղը միայն երկինքը պարզ եղած գիշերները կ'ըլլայ, և ամպոտ եղածին պէս չ'ըլլար, վասն զի ամպոտ եղած գիշերն աւելի տաք կ'ըլլայ քան թէ պաղ. ասոր ալ նիւթաբանական (physique) պատճառը դարձեալ ամպերն են որ երկրային մարմնոց պաղելու համար կորուսած տաքութեան ճառագայթումը մեծաւ մասամբ կը խափանեն օդոյն մէջ երթալ կորսուելու, և զանի իրենք ընդունելով ետ կը դարձնեն երկրային մարմնոց, և ասոնք անոնց այսպէս փոխադարձաբար։

4. Եղեամը այն գիշերվան իջած ցօղն է որ գարնան սկիզբներն ու աշնան վերջերը սաստիկ ցուրտէն կը սառի ու ճերմակ ճերմակ կը նստի։

5. Անձրեւ է երկինք ելած գոլորշիքն երբոր ցրտէն միանալով ու ծանրանալով կաթիլ կաթիլ կը տեղայ։

Աշխարհիս ամեն կողմը միակերպ անձրեւ չ՚ըլլար. ընդհանրապէս հասարակածի կողմերն աւելի անձրեւ կու գայ, թէպէտեւ շատ անգամ ալ չորութիւն կ՚ըլլայ. իսկ բեւեռաց մօտ թէպէտ ստէպ բայց քիչ կ՚անձրեւէ։ Անձրեւն աւելի լերանց վրայ կու գայ քան թէ դաշտերու, վասն զի լերանց օդն ստէպ պաղէն տաք՝ տաքէն պաղ կը փոխուի. այս փոփոխութեանց ատեն թէ որ այն տեղերն ամպ գտնուի, մէկէն անձրեւ կ՚ըլլայ։

Արեւադարձից մէջտեղը միշտ կանոնաւոր անձրեւ կու գայ, վասն զի այն կողմերու հովերն ալ կանոնաւոր կերպով կը փչեն։

Կարմիր անձրեւը կամ ձիւնը շատ անգամ Ալպեան լերանց վրայ կու գայ տեղ տեղ ու քիչ քիչ. ոմանք կ՚ըսեն թէ այդ կարմրութիւնը այն տեղի մանր ճճիներէն ու բոյսերէն է, բայց ստոյգը դեռ չ՚է գիտցուած։

6. Ձիւն կ՚ըլլան այն անձրեւի կաթիլներն որ ցուրտ օդոյն մէջ հանդարտապէս սառելով ու բիւրեղանալով թեթեւ թիթեւ վար կ՚ինկնին։ Եթէ օդը յուզեալ է՝ ձեան պատառներն անկանոն կերպով կ՚ըլլան. իսկ հով չեղած ատեն վեցաթեւ աստղի նման են եւ խոշորկեկ ալ կ՚ըլլան, վասն զի ձիւնը վար ինկնելու ատեն՝ մէկ դիէն ուրիշ գոլորշիք ալ անոր դպչելով կը սառին ու կը խոշորնան։

Տնկոց վրայ ձեան ազդեցութիւնն յայտնի է. ցուրտէն կը պահպանէ զանոնք եւ աւելի ոյժ կու տայ բուսական աճման զոր ապա գարուն կը զարգացնէ։

7. Կարկուտն է ձիւն կամ ձիւնախառն անձրեւ, որ օդոյն մէջ երկու հակառակ շփրութեամբ մէկ դիէն մէկալ դին նետուելով վար ինկնիլը կ՚ուշանայ, պաղէն կը սառի, ու քանի կ՚երթայ խոշորնալով ուժով վար կը թափթփի։ Մինչեւ մէկ ու կէս լիբրա ծանրութեամբ կարկուտ ինկած է։

---

## Գ. ԼՈՒՍԵՂԷՆ ՄԷՏՕՐԱՅՔ

Արեւին ճառագայթներուն այլ եւ այլ կերպով զարկուածքէն կը ձեւանան լուսեղէն մետորայք, որ են Ծիածան, Արշալոյս, Արեւանմանութիւն, Բոլ, Կրկներեւոյթ։

1. Արեւի լոյսին մէջ 7 գոյն ճառագայթներ կան, որ եռակուս ճամի մէջէն անցնելու ատեն կ՚երեւնան. որք են՝ կարմիր, նարնջագոյն, դե-

ղին, կանաչ, բաց կապոյտ, մութ կապոյտ, մանիշակագոյն։ Անձրեւի ատեն երբոր արեւը քովընտի զարնէ անձրեւի կաթիլներուն վրայ, այս 7 գոյները զատ զատ կ'երեւնան երկինքը՝ կամարաձեւ. աս՛ է Ծիածան կամ Ծիրանի գօտի ըսուածը։ Ասոր ալ նմանը երբեմն քովի ամպերուն վրայ ձեւանալով՝ երկու ծիրանի գօտի կ'երեւնայ։ Երբեմն մեծ ծովերու եւ դաշտերու վրայ ալ երբոր գոլորշիքը խիստ թանձր է՝ պզտի ծիածան մը կ'երեւնայ։

2. Առաւօտները քանի որ արեւը հորիզոնէն 18 աստիճան ցած է, իր լուսոյն կարմրագոյն շառաւիղները մեր մթնոլորտին վրայ կը զարնեն՝ մինչեւ որ արեւը հորիզոնէն վեր բարձրանայ. այս կարմրագոյն լոյսը Արշալոյս կ'ըսուի, որ արեւին ծագումէն մէկ ժամ առաջ կ'ըսկսի։ Նոյնպէս ալ իրիկուններն արեւը մտնելուն պէս բոլոր արեւմտեան եզերքը կը կարմրի. այս կարմրութիւնն ալ Վերջալոյս կ'ըսուի, որ ամառը մինչեւ 2½ ժամ կը դիմանայ։ Մթնոլորտն որքան թանձր ըլլայ, արշալոյսն ու վերջալոյսն ալ այնքան մեծ ու տարածեալ կ'ըլլան։

3. Արեւանմանութիւն է այն երեւոյթն որ երբեմն արեւին լոյսն իր դիմացի ամպերուն վրայ անանկ մը կը զարնէ որ այն ամպերուն վրայ ուրիշ արեւներ ալ կ'երեւնան։

4. Բոլորարեւ կ'ըսուի ծիածանի պէս այն գունըզգոյն կլոր շրջանակը որ ամառ ատեն երբեմն արեւին չորս դին կ'երեւնայ։

Կարծուի թէ այդ գունըզգոյն երեւնալը օդոյն մէջի ձիւներէն է որ արեւին լոյսը վրան զարնելով անանկ կ'երեւցնէ։

Երբեմն այս բակը երկու հատ կ'ըլլայ վրայէ վրայ համակեդրոն, բայց դրսի կողմը եղածին գոյները այնքան փայլուն չեն ըլլար։

Լուսինն ալ երբեմն բակ կ'ունենայ, բայց արեւինէն աս տարբերութիւնն ունի որ անոր պէս գունաւոր չ'երեւնար, այլ ճերմակ կ'ըլլայ եւ մէկ կողմը միայն քիչ մը կարմրագոյն։

5. Ամառը տաք ատեն դաշտերու մէջ եղած շէնքը կամ ծովին երեսի նաւը վրայէ վրայ երկու հատ կ'երեւնայ, մէկը շիտակ՝ մէկալը գլխիվար, ինչպէս որ ջրոյ մէջ կ'երեւնան. այս երեւոյթը կ'ըսուի Կրկներեւոյթ։

---

## Գ. ՀՐԵՂԷՆ ՄԵՏՕՐԱՅՔ

Օդոյն մէջ երեւցած կրակէ երեւոյթքը հրեղէն մետօրայք կ'ըսվին, և են Փայլակ, Կայծակ, Հիւսիսայգ, Շրջմոլիկ հուր, Աստղ, Երկնաքար:

1. Երբոր ամպերու մէջ լցված երկու տեսակ շփրութիւնը (1) մէկմէկու հաղորդվին, ձայն, լոյս և հուր կը հանեն. ձայնը կ'ըսվի որոտում, լոյսը՝ փայլակ, և հուրը՝ կայծակ կամ շանթ: Որոտման ձայնը 120 հիլամետր տեղէն աւելի հեռի չ'երթար:

2. Հիւսիսայգը լուսաւոր ամպի կը նմանի, գոյնը կրակի պէս կարմիր, տեղ տեղ փայլուն գօտիներով. աս երբեմն հիւսիսային կողմը հորիզոնին վրայ կ'երեւնայ՝ արեւը մտնելէն 3, 4 ժամ ետքը: Ասոր պատճառը մագնիսական շփրութիւնը կը կարծվի:

3. Շրջմոլիկ հուրն է բոցի պէս լոյս մը, որ ատեն ատեն գերեզմաննոցներու մէջ կամ բաց տեղվանք կ'երեւնայ:

Ռամիկը շատ աւելորդապաշտ կարծիքներով այս կրակէն կը զարհուրի, բայց վախնալու բան չ'է. վասն զի ասոր բուն պատճառը լուսկրաւոր ջրածին (hydrogène phosphoré) կազն է որ փիշեալ տեղեաց փտութիւններէն կ'արտադրի և օդոյն հետ հաղորդվելուն պէս կը բռընկի ու մինչեւ հատնի կը վառի:

4. Աստղ կ'ըսվի աստղի պէս թռչօղ այն լոյսն որ ամառ գիշերներն երկինքը կ'երեւնայ:

Ըստ արդի բնաբանից՝ աստուպները մեր մթնոլորտէն վեր երկրիս վրայ պտըտօղ մանր մարմիններ են որ աչքով չ'են երեւար. ասոնք երբոր մեր մթնոլորտին հետ սաստիկ շփվին՝ լոյս կը հանեն:

5. Երկնաքար կ'ըսվի այն աստուպն որ երկրիս ձգողութեամբը երբեմն գե-

(1) Յոյն յոյնով ելեկտրականութիւն ըսվածը՝ բոլոր մարմիններէն ու բոլոր մարմնոց մէջ բնական կերպով տարածեալ զօրութիւն մըն է որ շփելով զգալի կ'ըլլայ և ուրիշ մարմիններն երբեմն կը քաշէ կամ կը վանէ: Հայ բառով՝ այս բնական զօրութիւնը շփուր անուանեցինք և անոր զօրութիւնը շփրութիւն կամ շփրական երեւոյթք, կրճատելով և ստուգաբանելով շփել կամ շփելով հուր. և բարդելով ու ածանցելով ըսինք՝ շփրական (électrique), շփրել (électriser), շփրագրութիւն (télégraphie électrique), շփրագիր (télégramme), ևն:

տինը կ'ընկնի աչագին շառաչմամբ ու լուսով: Գարիս սկիզբէն ի վեր եօթնուռնէն աւելի երկնաքար ընկած է Եւրոպայ և Ամերիկայ մէջ. ամենէն մեծն Անկլիա ընկած է որ 80 լիվրէն աւելի կը կշռէ: Ամեն երկնաքարաց բաղկացութիւնը գրեթէ նոյն է. այսինքն երկաթ, գայլախազ, ծըծումբ, նիքէլ, մանկանէզ: Ասոնց արտաքին գոյնը հանքածուխի պէս սեւ է բայց մէջը երկաթի պէս փայլուն:

Թ.

---

Տե՛ս այս տարեցոյցին մաս երկրորդի հատորին մէջ Երկրաբանութեան կամ Պատմութեան երկրի:

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*****

A quoi bon entendre
Les oiseaux des bois?
L'oiseau le plus tendre
Chante dans ta voix.

Que Dieu montre ou voile
Les astres des cieux!
La plus pure étoile
Brille dans tes yeux.

Qu'Avril renouvelle
Le jardin en fleur!
La fleur la plus belle
Fleurit dans ton cœur.

Cet oiseau de flamme,
Cet astre du jour,
Cette fleur de l'âme
S'appelle l'Amour.

VICTOR HUGO

*(Ruy Blas)*

ՈՎ ԻՄ ՍԻՐՈՒՀԻ

—

Զի՞ փոյթ թէ երգեն
Թռչունք անտառէն.
Թռչուն հրաշաձայն
Ի քո՛ւմ երգէ ձայն։

Բացխրփէ՛ թող Տէր
Զաստեղս իւր ՚յեթեր.
Աստղ հրաշալոյս
Քո՛ւմ փայլի ՚յաչկունս։

Նորէ՛ թող Ծաղկին
Ծաղկամբ ըղ գետին.
Ծաղիկ հրաշատիպ
Ի քո՛ւմ ծաղկի սիրտ։

Այդ թռչուն հրավառ,
Այդ աստղ չքնաղ,
Այդ ծաղիկ հոգւոյ
Անուանք են Սիրոյ։

Վ. ՀԻՒԿՕ
(Ռ—յ Պլ—ս)

12 Ծաղկին 1865

Ռ.

* * * * *

Quand tu chantes, bercée
Le soir entre mes bras,
Entends-tu ma pensée
Qui te répond tout bas?
Ton doux chant me rappelle
Les plus beaux de mes jour!...
Chantez, ma belle,
Chantez toujours!

Quand tu ris, sur ta bouche
L'amour s'épanouit,
Et le soupcon farouche
Soudain s'évanouit!
Ah! le rire fidèle
Prouve un cœur sans détours...
Riez, ma belle,
Riez toujours!

Quand tu dors, calme et pure,
Dans l'ombre, sous mes yeux,
Ton haleine murmure
Des mots harmonieux.
Ton beau corps se révèle
Sans voile et sans atours...
Dormez, ma belle,
Dormez toujours!

## Ո՛Վ ԻՄ ՀՐԵՇՏԱԿ

—

Երբ երգես 'յերեկոյն
Օրօրեալ դու 'յիմ գիրկ,
Ո՛հ լըսե՞ս 'զիմ հոգւոյն
Անդրաձայն քեզ դաշնիկ.
Երգդ աղու՝ յիշատակ
Ինձ աւուրց իմ անվիշտ…
Երգէ՛, հրեշտա՛կ,
Երգէ՛ դու միշտ:

Երբ ժպտիս, սէր ի շուրթ
Վարդագեղ քո փթթի,
Եւ կասկածըն պակշոտ
Անդէն իսկ փարատի.
Ա՛հ, ժպիտ անպատրանք
Զանմանուածն յայտնէ սիրտ…
Ժպտէ՛, հրեշտա՛կ,
Ժպտէ՛ դու միշտ:

Երբ ննջես անդորրիկ
Ի ստուերի 'նդ իմ աչօք,
Հըծծէ սուրբ քո շընչիկ
Դաշնալիր բանս ողոք.
Անզարդար անպարփակ
Հոլանոյ գեղ մարմնիդ…
Ննջէ՛, հրեշտա՛կ,
Ննջէ՛ դու միշտ:

Quand tu me dis : Je t'aime !
O ma beauté ! je croi...
Je crois que le ciel même
S'ouvre au-dessus de moi !
Ton regard étincelle
Du beau feu des amours...
Aimez, ma belle,
Aimez toujours!

Vois-tu ? toute la vie
Tient dans ces quatre mots,
Tous les biens qu'on envie,
Tous les biens sans les maux.
Tout ce qui peut séduire,
Tout ce qui peut charmer...
Chanter et rire,
Dormir, aimer.

VICTOR HUGO
*(Marie Tudor)*

Երբ ըսես՝ Սիրե՛մ քեզ,
Հաւատամ, ո՜ դշխոյս…
Ու երկնից իսկ գոգցես
Բանին դրունք իմ գլխոյս.
Հրաշագեղ փայլատակ
Արձակէ՛ սէր յաչքէդ…
Սիրէ՛, հրեշտա՛կ,
Սիրէ՛ դու միշտ։

Ո՞չ միթէ յայս քառեակ
Բառս եզրին կեանք ամեն,
Եւ բարիքն ըղձականք՝
Բարիք զերծ ի չարէն.
Հրապուրանք ճշմարիտ
Ու վայելք կենսաբեր…
Երգ ու ժպիտ,
Նիրհում և սէր։

Վ. ՀԻՒԿՕ
(Մարի Դիւտոր)

5 Հնձար 1869
Ռ.

## *SOUVENIR.*

—

En vain le jour succède au jour,
Ils glissent sans laisser de trace;
Dans mon âme rien ne t'fface,
O dernier songe de l'amour!

Je vois mes rapides années
S'accumuler derrière moi,
Comme le chêne autour de soi
Voit tomber ses feuilles fanées.

Mon front est blanchi par le temps;
Mon sang refroidi coule à peine,
Semblable à cette onde qu'enchaine
Le souffle glacé des autans.

Mais ta jeune et brillante image,
Que le regret vient embellir,
Dans mon sein ne saurait vieillir:
Comme l'âme, elle n'a point d'âge.

## ՅԻՇԱՏԱԿ

—

Զուր յաջորդեն աւուրք աւուրց,
Սահեալ անցնին ըստուերանման.
Այլ 'իս անե՛ղծ կաս յաւիտեան,
Ո՜վ դու սիրոյ յետին անուրջ։

Տեսանեմ 'զամացս իմ սրընթաց
Ըզ կուտակիլ ընդ իմ՝ ետեւ,
Որպէս կաղնի տեսանէ 'զիւրեւ
Թօթափիլ իւր դօս տերեւաց։

Տարիք բերին ալիք ճակատս.
Արիւնս անջերմ հազիւ հոսէ,
Որպէս վըտակ 'զոր կաշկանդէ
Ցըրտասաստուն շընչովն հիւսիս։

Այլ քո չըքնաղ տեսիլ դալար՝
Զոր կրկնագեղ առնէ կսկիծ,
Յիմ սիրտ մընայ անծեր անքիծ.
Որպէս հոգւոյ՝ չի՛ք նմա դար։

Non, tu n'as pas quitté mes yeux;
Et quand mon regard solitaire
Cessa de te voir sur la terre,
Soudain je te vis dans les cieux.

Là, tu m'apparais telle encore
Que tu fus à ce dernier jour,
Quand vers ton céleste séjour
Tu t'envolas avec l'aurore.

Ta pure et touchante beauté
Dans les cieux même t'a suivie;
Tes yeux, où s'éteignait la vie,
Rayonnent d'immortalite!

Du zéphyr l'amoureuse haleine
Soulève encor tes longs cheveux;
Sur ton sein leurs flots onduleux
Retombent en tresses d'ébène.

L'ombre de ce voile incertain
Adoucit encor ton image,
Comme l'aube qui se dégage
Des derniers voiles du matin.

Ո՛չ դու երբեք 'զաչս իմ լքեր,
Եւ երբ ակն իմ ի քէն այրի
Կորոյս ըզքեզ աստ ի յերկրի,
Իսկո՛յն տեսի քեզ ի յեթեր։

Անդ, դեռ այնպէս ինձ երեւիս
Որպէս 'յաւուրն այն հուսկ ի խոյս
Յորում յանկարծ ընդ արշալոյս
Հրեշտա՛կ 'յերկրէ սլացար 'յերկինս։

Գեղ քո ամբիծ և սրտաւիւն
Յերկինս ի՛սկ է անբաժ ի քէն.
Աչվէդ՝ 'յորում՝ շիջանէր կեն,
Ճառագայթե՛ն 'զանմահութիւն։

Դեռ զեփիւռին շունչ սիրահար
Ջերկայն մազերդ վեր վեր բառնայ,
Եւ ծածանին հիւսքն էպէնեայ
Շուշանադեղ լանջացդ ի վար։

Դեռ անկայուն քօղիդ ըստուեր
Ցանկալի եւս առնէ 'զճակատդ,
Իբր արշալոյս մառախլապատ
Որ քօղամերկ հերձնու 'զեթեր։

Du soleil la céleste flamme
Avec les jours revient et fuit;
Mais mon amour n'a pas de nuit,
Et tu luis toujours sur mon âme.

C'est toi que j'entends, que je vois:
Dans le désert, dans le nuage,
L'onde réfléchit ton image;
Le zéphyr m'apporte ta voix.

Tandis que la terre sommeille,
Si j'entends le vent soupirer,
Je crois t'entendre murmurer
Des mots sacrés à mon oreille.

Si j'admire ces feux épars
Qui des nuits parsèment le voile,
Je crois te voir dans chaque étoile
Qui plaît le plus à mes regards.

Et si le souffle du zéphire
M'enivre du parfum des fleurs,
Dans ses plus suaves odeurs
C'est ton souffle que je respire.

Արեգական քոյ երկնավառ
Ընդ տուընջեան գայ և գընայ.
Իսկ իմ սիրոյ գիշե՛ր չը կայ,
Դու ՚յիմս հոգի ցոլաս խապառ:

Քե՛զ լըսեմ, քե՛զ ակն իմ տեսնէ
Յանապատի, ՚յամպս, ի՛յ այեր.
Ջուրք ցոլացնեն ըզ քո պատկեր,
Զեփիւռ ըզ ձա՛յնդ ինձ առբերէ:

Մինչդեռ ի քուն թմրի աշխարհ՝
Թէ ՚զսօսաւիւն լըսեմ հողմոյ,
Ըզ քո՛ կարծեմ մըմունջ սիրոյ
Յունկն իմ հծծել երկնաբարբառ:

Թէ հիանամ՝ ընդ հուրս ցիրցան
Ոյք գիշերաց ըզ քօղ զարդնեն,
Քե՛զ նշմարեմ ՚յաստղ այն ամեն
Որ աղուագոյն փայլի ական:

Եւ թէ անոյշ սիւք զեփիւռին
Իս հարբեցնէ ծաղկանց ի բոյր,
Նոցին ի հոտս անուշափիւռ
Ըզ քո՛յդ շընչեմ շունչ կաթողին:

C'est ta main qui sèche mes pleurs,
Quand je vais, triste et solitaire,
Répandre en secret ma prière
Près des autels consolateurs.

Quand je dors, tu veilles dans l'ombre
Tes ailes reposent sur moi;
Tous mes songes viennent de toi,
Doux comme le regard d'une ombre.

Pendant mon sommeil, si ta main
De mes jours déliait la trame,
Céleste moitié de mon âme,
J'irais m'éveiller dans ton sein!

Comme deux rayons de l'aurore,
Comme deux soupirs confondus,
Nos deux âmes ne forment plus
Qu'une âme, et je soupire encore!

LAMARTINE

Քո՛ ձեռք որբեն 'զիմ արտասուս,
Յորժամ երթամ, մենիկ թաղծուկ,
Սփռել 'զաղօթս իմ ի ծածուկ
Յառ' սեղանաց ըսփոփածուս:

Երբ ննջեմ, դու հըսկես ի ստուեր
Ինձ հովանի հովաթեւեան.
Ի քէ՛ն ամեն երազք իմ գան
Աղու որպէս հայի ըստուեր:

Քընոյս մէջ՝ թէ 'զաւուրց իմոց
Լուծանէր ձեռըն քո 'զհանգոյս,
Երկնակենցաղ կէ՛սդ իմ հոգւոյս,
Ի քո՛ւմ գնայի զարթնուլ ի ծոց:

Զինչ երկոքին շողք երկնաճեմ,
Զինչ երկոքին հառաչք խառնեալ,
Զ'են եւս հոգիք մեր այլ և այլ,
Այլ մի հոգի, և դե՛ռ հեծեմ:

ԼԱՄԱՐԹԻՆ

6 Տօթար 1869

Ռ.

## ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

—

1. Օրացոյց.
2. Մշակական.
3. Ժամանակագրութիւն.
4. Վիճակագրութիւն.
5. Տարբերաշխութիւն.
6. Երկնաբանութիւն և Օդերեւոյթք.
7. Բանասիրական.

---

### Վրէպակ

Վիճակագրութեան մէջ Գերմանիոյ բնակիչքը 35 միլիոն կարդալու է։

ԲՆԱԿԱՆ

# ՏԱՐԵՑՈՅՑ

# 1872

ԹՎԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀԱՆԴԵՐՁ

ԵՐԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵՕՔ

ԳԻՆ 2 ԲՈԼՈՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ Ի ԲԵՐԱ

6660

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0034517